6. Վաճառականների օրդիրը, որոնք անբաժան են իրանց ծնողներից:

Չերոյիշեալ անձնաւորութիւնների արւած մուրհակները մուրհակի ոյժ չեն կա-

րող ունենալ, բայց ըստ հայեցողութեան դատաւորի նրանք կարող են պարտաւրազրի նշանակութիւն ունենալ:

Մուրհակը պէտք է գրել յատկապէս մուրհակի համար օրէնքով որոշուած (репрѳовою) թղթի վերայ, հակառակ գէպրում տուգանք է ստնւում օրինական թղթի արժէքից 10 անգամ աւելի:



Հասարակ մուրհակների մեքեր

Александрополь, 24 Ноября 1903 г.

Вексель на 2000 рублей.

2 Января 1903 года по сему векселю повинень я заплатить Московскому купцу Аршаку Оганесовичу Геворкянцу двѣ тысячи рублей.

Александропольскій купецъ Оганесъ Геворговичъ Степанянцъ.

II

Александрополь, 24 Ноября 1903 г.

Вексель на 2000 рублей.

Отъ сего числа *черезъ три мѣсяца* по сему векселю повинень я заплатить Александропольскому купцу Саркису Яковлевичу Петросянцу двѣ тысячи рублей.

Александропольскій житель Гегамъ Ардеелянъ Минасянцъ.

Ալէքսանդրապօլ, 24 Նոյեմբերի 1903 թ.

Մուրհակ 2000 ռուբ.

1903 թուի Յունվարի 2-ին այս մուրհակով պարտաւոր եմ վճարել Մոսկվայի վաճառական Արշակ Գէորգեանցին երկու հազար ռուբլի:

Ալէքսանդրապօլի վաճառական Յովհաննէս Ստեփանեան:

Ալէքսանդրապօլ, 24 Նոյեմբերի 1903 թ.

Մուրհակ 2000 ռուբ.

Սոյն թուից երեք ամիս լիսոյ, այս մուրհակով պարտաւոր եմ վճարել Մոսկվայի վաճառական Արշակ Գէորգեանցին երկու հազար ռուբլի:

Ալէքսանդրապօլի բնակիչ Յովհաննէս Ստեփանեան:

Գրուագաւոր քղքերի գինը

(Մուսիակների)

Թղթի

Մուսիակների դամարը. գինը.

Մինչև 50 ռ. — 10 կ.

» 100 » — 15 »

» 200 » — 30 »

» 300 » — 45 »

» 400 » — 60 »

» 500 » — 75 »

» 600 » — 90 »

» 700 » 1 05 »

» 800 » 1 20 »

» 900 » 1 35 »

» 1000 » 1 50 »

» 1500 » 2 25 »

» 2000 » 3 » »

» 3000 » 4 50 »

» 4000 » 6 » »

» 5000 » 7 50 »

» 6000 » 9 » »

» 7000 » 10 50 »

Մինչև 8000 ռ. 12 — կ.

» 9000 » 13 50 »

» 10000 » 15 50 »

» 20000 » 30 — »

» 30000 » 45 — »

» 40000 » 60 — »

» 50000 » 75 — »

Կապակցութիւնների (ակսերի)

Թղթի

գինը.

Ակսերի դամարը.

Մինչև 100 » — 40 »

» 200 » — 80 »

» 300 » 1 20 »

» 400 » 1 60 »

» 500 » 2 — »

» 600 » 2 40 »

» 700 » 2 80 »

» 800 » 3 20 »

» 900 » 3 60 »

» 1000 » 4 — »

» 2000 » 8 — »

»	3000	»	12	—	»
»	4000	»	16	—	»
»	5000	»	20	—	»
»	6000	»	24	—	»
»	7000	»	28	—	»
»	8000	»	32	—	»
»	9000	»	36	—	»
»	10000	»	40	—	»
»	20000	»	80	—	»
»	30000	»	120	—	»
»	40000	»	160	—	»
»	50000	»	200	—	»
»	100,000	»	400	—	»
»	200,000	»	800	—	»
»	300,000	»	1200	—	»
»	500,000	»	2000	—	»

III ՕՐԷՆՍՊԻՏԱԿԵՆ

Ճանկանալով մի փոքրիկ ծառայութիւն մատուցանել ուսահապատակ հայերի այն սաուար մասին, որ ուրիշ միջոց չունի մօտիկ ծանօթանալու տիրապետող կառավարութեան օրէնքներին, մենք „Օրացոյցիս“ յաւելուածի ներածիւն չափ առաջ ենք բերում այստեղ „Судѣбные уставы“ անունով 1883-ին հրատարակուած Օրէնքազրքի այն յօդուածները, որոնք կարող են հետաքրքրական ու պիտանի լինել առհասարակ ամենքին:

Քաղաքացիական դատավարութիւն

32. Պահանջը (искъ, գործը) առաջարկում է այն Հաշտարար Գատաւորին, որի բաժնումը (ուշաստօք) մշտապէս կամ ժամանակաւորապէս բնակւում է պատասխանատու անձը (օտովեաչիկ):

33. Այն պահանջը, որ վերաբերում է ալ և այլ հաշտարարական բաժիններում

ընակող մի քանի պատասխանատու ան-
ձինքներին, դատաստանելի (պահանջողի) ընտ-
րութեամբ առաջարկում է այդ բաժիննե-
րից մէկի հաշտարար Գատաւորին:

46. Գատ վարողները իրանց ընտրած
հաւատարմատարներին (պովերէններ) մա-
սին հաշտարար Գատաւորին յայտնում են
բերանացի կամ գրաւոր:

47. Հաւատարմատարի ընտրութեան մա-
սին արած բերանացի յայտարարութիւնը
(զանուլենիէ) հաշտարար Գատաւորը մտ-
ցնում է իր օրագիրը (ժուռնալի) որ ստո-
րագրում է և պահանջողը, եթէ նա գրա-
գէտ է: Սրա մասին աննւիր գրաւոր յայ-
տարարութիւնը կարող է անուիր կամ նոյն
խոսք խնդրագրի վրայ կամ առանձին հա-
ւատարմութի (գովերեննոստի) վրայ:
Այսպիսի յայտարարութեան մէջ հաւատար-
մութիւն տուողի (գովերիսեւլ) ստորագրու-
թիւնը պէտք է վաւերացրած (զասվիդեսել-
ստովոփան) լինի հաշտարար Գատաւորի,
նօտարի, ոտիկանութեան կամ տեղական

վարտանի կառավարութեան կողմից:

48. Այն հաւատարմատարը, որին զան-
գատողը (տեսժուշչիսեակ) յանձնելու է
իր գործը հաշտարար Գատաւորի մօտ վա-
րելը, կարող է այն վերջացնել հաշտու-
թեամբ, թէպէտ և դրա մասին յիշուած
չլինի հաւատարմութի մէջ:

49. Հաւատարմատարը կարող է հրա-
ժարուել իրան յանձնուող գործի մասին
միջնորդելուց (խօղատայստփօ) բայց դրա-
նից յետոյ չի կարող հաւատարմատարու-
թիւն անել հակառակ կողմի համար և, իր
գործատիրոջ բացակայութեան դէպքում,
պարտաւոր է տեղեկութիւն տալ նրան իր
մերժման մասին այնքան վաղ, որ նա
մինչև ժամանակամիջոցը (սրոկ) կարողա-
նայ ներկայանալ ինքը կամ ուղարկել մի
այլ հաւատարմատար:

50. Գործատէրը կարող է ամեն ժա-
մանակ ոչնչացնել հաւատարմատարին
առեւած հաւատարմութեզթը, յայտնելով
դրա մասին հաշտարար Գատաւորին գրու-

ւոր կամ բերանացի: Բայց Գատաւորը պարտաւոր չէ ոչ յետաձգել գործը այդ պատճառով, ոչ էլ սպասել նոր հաւատարմատարի նշանակելուն ու դատարան գալուն: Այն բոլոր գործողութիւնները, որոնք օրէնքի համար կատարուել են հաւատարմատարի ձեռքով, մինչև Հաշտարար Գատաւորի յիշեալ տեղեկութիւն ստանալը պահպանուած են իրանց գորութիւնը:

Պահանջի ներկայացման և դատարան կանչուելու մասին

51. Հաշտարար Գատաւորին աւելի խնդիրը կարող է լինել զբաւոր կամ բերանացի:

52. Հաշտարար Գատաւորը զբաւոր խնդիրը մատեան մուծելուց յետոյ՝ կորուզուած է գործատիրոջ (գանգատողի) մօտ, և նա, եթէ զբաղէտ է, ստորագրում է:

54. Թէ՛ զբաւոր և թէ՛ բանաւոր խնդիր տալու ժամանակ գանգատողը պարտաւոր է՝ 1) ցոյց տալ ինչպէ՛ս իր և վկաների,

իթէ այգալիսիններին նա մատնացոյց է սնուած, նոյնպէս և պատասխանատուի կուշումը, անունը, հայրանունը, մականունը, և բնակութեան տեղը: 2) ցոյց տալ այն սպացոյցները, որոնց վրայ նա հիմնուած է իր պահանջը: 3) նշանակել պահանջի դիրքը, բացի այն գործերից, որոնք գնահատութեան չեն ենթարկուած: 4) բացատրել՝ թէ իսկուպէ՛ս նա ինչ է պահանջում:

57. Այն գանդատողը, որ իր պահանջները հիմնուած է զբաւոր սպացոյցների վրայ, խնդիրը ներկայացնելիս յանձնուած է նրանց Հաշտարար Գատաւորին, ստորագրութիւն հանելով նրանից և յամենայն դէպս ոչ ուշ քան դատարան ներկայանալու համար նշանակած օրից մի օր աւաջ, երեկոյան երկու ժամը:

63. Կոշնագիրը (սովետական) յանձնուած է իրան կոշուած անձնաւորութեանը:

64. Կոշուած մարդու բացակայութեան դէպքում՝ կոշնագիրը թողնուած է նրա տանեցոց մօտ, կամ նրա կալուածքը, կամ

տանը կառավարողի, կամ այն գրացու մօտ, որ կհամաձայնուի կոչնագիրը հասցնելու կոչուած անձնաւորութեանը և գրա համար ստորագրութիւն կտայ:

67. Հաշտարար Գատաւորի մօտ ներկայանալու համար նշանակած օրը կարող է յետաձգուել երկու կողմի խնդրելով:

Վ. ԽձԱՊՆԵՐԻ ԸՆԵԿԱՅԱՆԱՅՈՒ ԵՒ զՈՐԾԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՇԱՍԻՆ

68. Հաշտարար Գատաւորի մօտ գործերի քննութիւնը կատարուած է հրատարակու և բանուօր կերպով: սակայն նիւտը կարող է լինել և անձայն, եթէ գրա մասին երկու կողմերն էլ կը խնդրեն և Հաշտարար Գատաւորը կյարգի նրանց խնդիրը:

70. Հաշտարար Գատաւորը երկու կողմերի հետ նախապէս բացատրուելուց յետոյ՝ առաջարկում է նրանց վերջացնել գործը հաշտութեամբ, ցոյց տալով, իւր կարծիքով, գրա համար ճշմարիտ միջոց-

ներ: Ելլալիսի հաշտեցուցիչ միջոցներ Հաշտարար գատաւորը պարտաւոր է գործ գնել և գործի ժամանակը, և միայն անյօջողութեան դէպքում ձեռք է տալիս վճիռ կայացնելուն:

71. Գանդատողների՝ հաշտութեամբ վերջացրած գործը բացատրվում է գրաւոր կերպով, և կարգալուց յետոյ, ստորագրուում է նրանց կողմից, կամ նրա կողմից, ում որ նրանք կը հաւատան այդ: Հաշտութեամբ վերջացրած գործը չի կարող նորից յարուցուել:

72. Ձեռք գարկելով գործի քննութեանը, և Հաշտարար Գատաւորը առաջարկում է գանդատողին պատմել գործի հանգամանքները և բացատրել իր պահանջները, յետոյ լսում է պատասխանատուի բացատրութիւնները թոյլ տալով երկու կողմին էլ սրանից յետ ևս հերթով լրացնել իրանց ցուցմունքները և առաջարկելով իր կողմից գործի բացատրութեան կարեւոր հարցերը: Երբ հաշտարար Գատաւորը կը գանի, որ գործը

բուսական բացատրուած է, այն ժամանակ
դողարեցնում է երկու կողմի վիճարանու-
թիւնը:

76. Գործի բացատրութեան համար ան-
հրաժեշտ տեղեկութիւններ կամ որ և իցէ
ատենական տեղից կամ պաշտօնտեղան ան-
ձից զբաւոր հաւաստիքի (գոհումէնս)
պատճէնը ստանալու համար՝ Հաշտարար
Գատուորը զանդատողին, նրա խնդրելովը
տալիս է վկայական, առ այն, որ տեղեկու-
թիւնը կամ զբաւոր հաւաստիքի պատճէնը
չիրաւի հարկաւոր է իսկուպէս և սրբան ժա-
մանակով:

77. Գործի ընթացքը Հաշտարար Գա-
տուորի մօտ ընդհատուած է. 1) բոլոր վի-
ճողների փոխադարձ համաձայնութեամբ
2) վիճողներից մէկի կամ հաւատարմա-
տարի մահուան, խելագարութեան կամ բո-
լոր իրաւունքներից զրկուելու գէպքում:

78. Գործը նորոգուած է երկու վիճող
կողմերի կամ նրանցից մէկի խնդրելովը:

Ապացոյցների մասին

81. Պահանջողը պէտք է ապացուցանի
իր պահանջը: Պահանջողի պահանջմանց
դէմ խօսող պատասխանատուն պարտաւոր
է ապացուցանել իր պատասխանները:

82. Հաշտարար Գատուորը ապացոյց-
ներ կամ տեղեկութիւններ չէ հաւարում,
այլ իր վճիռները հիմնում է բացառապէս
վիճողների ներկայացրած ապացոյցների
վրայ:

Գրաւոր ապացոյցներ

105. Հաշտարար Գատուորը գործի
վճռելու ժամանակը ի նկատի է ունենում
ամեն տեսակ գործողութիւններ (ակտ),
թէ վերջացրած և ընդունուած կարգով
ներկայացրածները, թէ տնայինը և թէ ու-
րիշ թղթերը:

106. Ընդունուած կարգով ներկայացրած և
վաւերացրած զբաւոր հաւաստիքների բո-
վանդակութիւնը չի կարող հերքուել վկա-
ների ցուցմունքներով:

107. Այն դէպքում, երբ վիճողները կասկած են յայտնում գործողութեան խկականութեան մասին, Հաշտարար Գատաւորը հաւաստիանում է նրա խկութեանը, համեմատելով այն ուրիշ գործողութիւնների հետ, ձեռքի (պոչերի) հետ և վկաներին հարցնելով, որի մասին և կազմում արձանագրութիւն:

Ն Ե Ղ Ա Վ Ե

115. Վիճողներին չէ արգելում, որ իրանց փոխադարձ համաձայնութեամբ խընդրեն Հաշտարար Գատաւորին իրանցից մէկի երգուելովը վճուել գործը. բայց Հաշտարար Գատաւորը չէ կարող ո՛չ ստիպել վիճողներին երգուել, ո՛չ էլ իրանից առաջարկել պահանջողին կամ պատասխանատուին:

117. Երգումն ընդունում է իբրև պայցոյց այն բանի, ինչի համար որ նա տեղի է ունեցիլ, և չի կարող հերքուել ուրիշի ոչ մի ապացոյցով:

118. Վիճողներին չէ թոյլատրում երգուել. 1) այն գործերում, որին մասնակցում են անշափահասները և առհասարակ այնպիսի անձնաւորութիւններ, որոնց չէ թոյլատրում ազատ կարգադրութիւններ անել մի կալուածքի մէջ. 2) այն հանգամանքներում, որոնք կապ ունեն արքունի վարչութիւնների, հողային հաստատութիւնների և քաղաքային կամ գիւղական շահերի հետ. 3) համայնքների և ընկերութիւնների գործերում:

Վ Ճ Ո Ւ Մ Ա Ս Ի Ն

129. Հաշտարար Գատաւորը կողմերի ասածը լսելուց յետոյ, ի նկատի է առնում գործի մասին առաջ բերած բոլոր հանգամանքները, և, իբ խղձի թեւադրութեամբ որոշելով ապացոյցների նշանակութիւնը և ոյժը, կայացնում է վճիւր, որ չպէտք է հսկառակի օրէնքին:

130. Վճիւրը կայացնելիս Հաշտարար Գատաւորը կարող է մէկ կամ երկու կողմի ասելովը տուճնորդուել հանրայայտ տե-

ղական սովորութիւններով, միայն այն դէպ-
քում, երբ տեղական սովորութիւններին
յարմարուելը խսկապէս թոյլ է տրուում օ-
րէնքով, կամ այն դէպքերում, որ շին
թոյլատրուած օրէնքով:

131. Հաշտարար Գատաւորը իրաւունք
չունի ոչ վճիռ կայացնելու այն առարկա-
ների վերաբերութեամբ, որոնց մասին ստ-
հանջ չէ յայտնուած, ոչ դատելու աւելի՛
քան որ պահանջում են վիճողները:

133. Վճիռ կայացնելով Հաշտարար Գա-
տաւորը դատապարտում է մեղադրուած
կողմին վարձատրելու տրդտրացած կող-
մին գործի վրայ դնացած ծախսերը, եթէ
վերջինս կը պահանջի այդ:

134. Հաշտարար դատաւորը վերջնակա-
նապէս վճռում է գործերը այնպիսի պա-
հանջներով, որոնց գումարը 2000 ռուբ-
լուց բարձր չէ:

135. Այն գործերի վերաբերութեամբ,
որ Հաշտարար Գատաւորը վճռում է վերջ-
նականապէս, նա վճռի մէջը նշանակում է

ժամանակամիջոց, առ այն, որ թոյլ է տրուում
մեղադրուած կողմին յօժարութեամբ կա-
տարի վճիռը:

136. Եթէ մեղադրուած կողմը չունի ոչ
մի պատրաստի միջոց վճռի համաձայն
դրամական գումարը հատուցանելու, այն
ժամանակ Հաշտարար Գատաւորը կարող
է յետաձգել վճիռը որոշ ժամանակամիջոց-
ներով, նայելով պահանջի քանակութեանը
և պարտապանի միջոցներին, որի մասին և
վիճողների ցանկութեամբ աւելի է նրան
վկայաթուղթ:

137. Այն պարտապանը, որ թոյլ է տա-
լիս անճշտութիւն հատուցանելու մէջ՝ նախ-
ընթաց (136) յօդուածի հիման վրայ նրան
արած յետաձգումից (քաղսօշկա) յետոյ՝
պահանջողի խնդրելովը ենթարկւում է Հաշ-
տարար Գատաւորի կարգադրութեամբ բո-
լոր գումարը անյսպաղ հատուցանելուն:

139. Վճիռը կայացնելով՝ Հաշտարար
Գատաւորը համառօտ կերպով արձանա-
գրում է և յայտնում է վիճողների բոլոր

ներկայ եղողները առաջը:

141. Վճիռը յայտարարելուց յետոյ Հաշտարար Պատուարը պարտուոր է կողմնել այն վերջնականապէս ոչ ուշ քան երեւ օրում:

144. Վճռի պատճէնը Հաշտարար Պատուարը պարտուոր է տալ ոչ ուշ քան երեսուրդ օրը՝ զբա մասին խնդիր ստանալու ժամանակից:

Քացակայական (գաօցնի) վճռի և պատասխանի (օսգիւ) մասին

145 երբ պատասխանատուն չէ ներկայանում նշանակած ժամանակամիջոցին, Հաշտարար Պատուարը, պահանջողի լռելիքը կայացնում է բացակայական վճիռ, իսկ երբ պահանջողը չէ ներկայանում, դադարեցնում է գործի քննութիւնը, բայց պահանջողը չէ զրկում գործը նորից սկսելու իրաւունքից, ներկայացնելով նոր պահանջողական խնդիր:

147. Եթէ Հաշտարար Պատուարը որ և

իցէ կերպով իմանում է նիստի օրը, որ պահանջողի կամ պատասխանատուի Հներկայանալու պատճառը որ և իցէ անյողթելի արգելքներ են եղել, կամ որ հրաւիրման կոչնագիրը իր ժամանակին չէ հասցրած պատասխանատուին, այն ժամանակ յետաձգելով գործի վճիռը, նա վիճողներին, նոր ժամանակամիջոց է նշանակում ներկայանալու համար, որի մասին ներկայացողին յայտնում է բերանացի, իսկ Հներկայացողին ուղարկում է կոչնագիր: Այդ դէպքում, այսպիսի յետացման համար հիմք եղող առիթները պէտքէ մտցուին արձանագրութեան մէջ:

150. Քացակայական վճռի պատճէնը ուղարկում է պատասխանատուին կոչնագրի հետ:

151. Քացակայական վճռի պատճէնը յանձնելու ժամանակից, երկու շաբաթուայ ընթացքում պատասխանատուն իրաւունք ունի ներկայանալու Հաշտարար Պատուարին և խնդրելու պահանջողին հրաւիրելու և գործը նայելու մասին:

152. Պատասխանի ստանալովը բացու-
կայական վճիռը համարուում է անգօր և
գործը վերադառնում է այն դրուժեանք,
որի մէջը գտնուում էր մինչև վճռի կայա-
ցնելը:

153. Պատասխանատուի երկրորդ ան-
գամ չնեղկայանալու դէպքում, պահանջու-
ղի խնդրելովը, կայացնում է երկրորդ բա-
ցակայական վճիռը, որի դէմ պատասխան
(օտղիւ) չէ թոյլատրուում:

ԱՃՐԴԱԼՈՍՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԸ

1047. Առևտուրը պէտք է սկսուի ա-
ռուօտեան ասար ժամին և երեկոյեան վեց
ժամից աւելի չի կարող շարունակուել:

1048. Եթէ ասար ժամին ոչ մի առև-
տուր անող չի երևայ, կամ կղայ միայն
մէկը, այն ժամանակ դատական տեսուչը
(Սուղեբրնի Պրիստաւ) սր պէտք է սկսի
առևտուրը, պէտք է սպասի զնուգներին
մինչև երեկոյեան երկու ժամը. բայց եթէ
առևտուրի ու ժամին դան միայն երկու

զնող, այն ժամանակ նրանց պահանջելովը
Տեսուչը ձեռք է տալիս աճրգախօսու-
թեանը:

1049. Մէկ օրուայ մէջ չըվերջացած
առևտուրը շարունակուում է հետևեալ օրե-
րը՝ մինչև վերջացնելը:

1051. Պարտատէրը ընդհանուր հիման
վրայ կարող է մասնակցել աճրդին. բայց
պարտատուներ, նրա խնամակալը, կայքը ցու-
ցակազդելուն մասնակցող անձնաւորու-
թիւնը կամ նրա ծախողը, նոյնպէս և սո-
տիկանութեան անդամը, որ ներկայ է լի-
նում աճրդին՝ իրաւունք չունին մասնակցե-
լու առևտուրին:

1052. Առևտրին ներկայ եղող կայքի
տիրոջը թոյլ է տրուում պահանջել, որ այս
կամ այն առարկան միւսներինց վաղ ծախուի:

ԱՃՐԳԻ ԽԵՏԵԱՐՈՒՄԵՐ

1057. Գնողը աճրգի միջոցին տալիս է
նչ տակառ քան իր վերջին անգամ առա-
ջարկած զնի հինգերորդ մասը: Մնացածը

նա սլարտաւոր է վճարել առ ձեռն գրամով ոչ ուշ հետեւեալ օրուայ աստեղիտ ժամից:

1058. Ապրանքները տրուած են գնողներին աճրդի միջոցին նրանց առաջարկած գումարը լրի ստանալուց յետոյ:

1059. Եթէ ապրանքի մի մասի ծախուելուց ստացւած գումարը կարող է կատարելապէս բաւականութիւն առ սլարտքին և աճրդի ծախսին. այն ժամանակ մնացած իրերը չեն ծախուում և վերագարձուում են իրանց տիրոջը:

Չկայացած աճուրդը

1062. Աճուրդը համարուում է չկայացած 1) եթէ զնել ցանկացողները չեն գայ կամ կրգայ միայն մէկը. 2) եթէ եկողներից ոչ ոք գնահատութեան վրայ ոչինչ չի աւելացնի, 3) եթէ աճուրդը վերջանալուց յետոյ գնողը առհաւատաշեայ (զաղաւաօկ) տալով՝ իր ժամանակին չի վճարի մնացած գումարը:

1063. Երբ գնողներ չըլինելու պատճառով աճուրդը չըկայանայ, այն ժամանակ պարտապանի ներկայ կողմ պարտատէրերը իրաւունք ունեն ձայների բազմութեամբ, իրանց պահանջի համեմատ խընդրելու նոր աճուրդ անելու մասին կամ չը ծախուած իրերը գնահատած գնով իրանց վրայ թողնելու:

1064. Մնացած իրերը իր վրայ թողնելու իրաւունքը գլխաւորապէս պատկանում է այն պահանջատիրոջը, որի խնդրելովը արգելք (արեստ) էր գրուած պարտապանի կայքերի վրայ, իսկ յետոյ նրան որի պահանջը տւելի նշանաւոր է:

1065. Այն կայքը, որ չեն ծախուում երկրորդ աճրդին և որ պարտատէրերը չեն թողնում իրանց վրայ, ազատուում են արգելքից, իսկ պարտապաններին իրաւունք է տրուում պարտապանին պատկանած ուրիշ կայքերից անել իրանց պահանջները:

1607. Պահանջողը իրաւունք ունի խընդրելու նոր աճրդի մասին, եթէ առհաւատ-

չեան տալուց յետոյ մնացած զուգարք իր ժամանակին չէ վճարուած (յօդ. 1057): Այդպիսի դէպքուած առհաւատաշեան միացուած է այն ընդհանուր զուգարքի հետ, որ ստացւել է կայքերի վաճառուանց:

Անուամբ կայքերի հատարակիական պահուցումը ժախուելու ժամանակամիջոցները 1142. Անշարժ կայքերի հատարակական աւետարք տեղի է ունենում սչ պակաս քան տարին չորս անգամ Այո աճուրդների ժամանակամիջոցները նշանակուած են իւրաքանչիւր երեք տարուայ համար ներքին Գործերի Պաշտօնէի կազմից՝ Փինանների և Սրբարարատուիթեան Պաշտօնեանների հետ հագորդակցելուց յետոյ:

1143. Անշարժ կայքի աճրդի օրը չի կարող նշանակուել. 1) մի ամսից վաղ եթէ նա զնահատուած է 500 ր. սչ բարձր. 2) երկու ամսից վաղ, եթէ զնահատուած է 500 ր. տեղի. բայց սչ բարձր 1000 ր. 3) երեք ամսի վաղ, եթէ զնահատուած է 10000 ր. բարձր:

VI. ԲԱՐՈՅԵԿՆ ՄՏՁԵՐ

— Ոչինչ բան այնքան հաւատարիմ բարեկամ չէ՛ սեկ, որքան լու գիրքը:

— Այն մարդը, որ չէ լուսաւորուել մտաւոր լուսով, աւելի տարարախ է, քան թէ նա՛ որ կոյր է. ծնուել:

— Զբաղուած լինելը՝ երջանիկ լինել է:

— Պարսպ մարդու սղեկը սատանայի դարձարան է և ծոյլ մարդը գժսիքի սիւներից մէկն է:

— Առանց կարգ ու կանոնի՝ խելքը իր կարողութեան երեք քաւորդը կորցնում է:

— Առարխնի մարդը լու բաներից ամենամեծն է, և սեժ բաներից ամենալաւը:

— Լու խրտաներն ու վատ օրինակները մի ձեռքով շինում են, միւսովը քանդում:

— Այնպէս եղիր, ինչպէս որ քեզ ցոյց ետ տալիս, և միշտ այնպէս ցոյց տուր, ինչպէս որ կուս:

— Նա է տալիս տոտտաձեւն, սղ ոչ սքի չի պարտաւորեցնում. տալու եղանակը

աւելի նշանակութիւն ունի, քան թէ տուածը:

— Ամենաազնիւ զարգարանքը պարզութիւնն է:

— Աւելի լաւ է երեկոյեան առանց կերակուր ուտելու պառկել, քան թէ առաւօտ պարտով վեր կենալ:

— Ինքնահաւանութիւնը հոգու աչքացաւութիւնն է, այս պատճառով ուրիշ մարդիկ ինքնահաւանի աչքում փոքրիկ են երևում:

Մենք կրում ենք մեր մէջը մեր ամենամեծ թշնամոխները՝ մեր կրքերը:

— Ներելու առաջին աստիճանը՝ կրած վիրաւորանքի մասին շխտելն է:

— Մահկանացու մարդը անմահ նախնն չպիտի ունենայ:

— Արժանի չէ իշխանութեան այն մարդը, որ չէ կարողանում իշխել իր վրայ:

— Ճակատագիրը յաճախ խաղ է խաղում ազգերի գլխին, տալով նրանց փոխառ փոխ իրքն իշխաններ՝ երբեմն հերոսներ, երբեմն զերօններ:

— Մենք ամեն օր մեռնում ենք, իւրաքանչիւր բալն մեզ մի քայլ մօտեցնում է դերեզմանին:

— Կինը միայն մի կերպով կարող է զեղեցիկ լինել, բայց սիրելի լինել՝ կարող է հնգաբ կողմից:

— Չողորմ թն ու խարերան հաւատարմալէս երկիւզակի են:

— Յարի դործերը զանգերի պէս բարձրաձայն են հնչում երկնքում (Ռիքտէր)

— Արգարտէր մարդը, ասում է Մասիլիկոնը, աշխարհային խօսք ու գրոյցից բարձր է կանգնած և՛ թագաւորում է ամեն կեցութեանց վրայ: Ամենքը նրան հպատակում են. իսկ նա ինքը հպատակում է միայն միակ Աստծուն:

— Երբ մարդս մեռնում է, մարդիկ սովորաբար հարցնում են «Ինչ կարողութիւն է թողել». իսկ նրա հոգուն հոնգիւղ հրեշտակները հարցնում են երկնքւոր. «Ի՞նչ բարի գործեր ես ուղարկել դու այստեղ քեզնից առաջ»:

— Ոչ որ պարտական չէ լինել հարուստ, մեծ գիտուն, բայց ազնիւ լինել՝ պարտական է ամեն մարդ: (Բենիամին Ռուզիար):

— Մի ազգ որ ազնիւ, սուղամիտ, վեհունձն, արի և առաքինի չէ, միւս ազգերից յարդ չի գտնի և աշխարհումս որեւէ կշիռ չի ստանայ:

— Մի ազգ, որի գերագոյն աստուածը նրա թական շահն է կամ թէ գագն ու մտնէթր, անտարակոյս թշուառ վիճակ կունենայ:

— Մէկ լաւ մայր հարիւր վարժապետ արժէ: Տան մէջ նա բոլորի համար մի բեկոռային աստղ է և սրտերի մագնիսար: (Ջորջ Հեբբէրա)

Ամենատղքատ ասունն անգամ, որտեղ իշխում է մի առաքինի, աշխուրջ և ժիր կին, գաւնում է հանդատութեան, առաքինութեան և հրջանկութեան օթեան (Ս. Սմայլս):

— Մի մարդ որ սիրում է իր բնատակրքը, նոյն սիրով կը ծառայէ և, հոյրենիքին (Նոյն):

— Գտատրեկապարտ, ուր՝ մե և անօգուտ մարդը, ինչքան էլ երկար տղրի, տպրած չի լինի, այլ միայն բուսած կամ աճած (Սմայլս):

— Աւելի լաւ է որ ես ինքս վնաս կրեմ ճշմարտութիւն ասելով, քան թէ լռելովս ճշմարտութիւնը վնասուի: (Ջոն Պիմ)

— Ճշմարիտ մեծութիւնը անձնական վայելքներ, փառք ու հռչակ որոնելով չէ ստացում, այլ պարտքը կտատրելով: (Ռօբերտսօն):

— Մենք սրիշների բախտը մտտին հողալիս մեր յատուկ բախտն ենք գտնում (Սմայլս):

— Դարեկցութիւնը՝ սրտեր բացանող մի սոկի բանալի է (Նոյն):

— Սիրելին կնոջ շնորհքն է, ոչ թէ գեղեցկութիւնը (Չէքսպիր):

— Ամուսնութեան սոկի կանոնն է՝ «Համբերիր, ու կրիր»: (Սմայլս):

— Ծոյլը կցներն ու արօքն է ծախում, գործունեայ մարդը՝ գինին ու պատուական բերքերը:

— Ծուլութիւնը այնքան ծանրաբայլ է, որ չուտով աղքատութիւնը հասնում է կտակից:

— Գու գործերդ առաջ մղիր, որ գործ ձերդ քեզ չմղեն:

— Առաքինութիւնը շղթաների մէջ էլ առաքինութիւն է:

— Առաքինի մարդը մի արեգակ է, որի ճառագայթները իրան մօտեցողին ջերմացնում ու լուսաւորում են:

— Առանց բարեկամի աշխարհս ամայի անապատ է:

— Գեղեցիկ բան է մեանելը անմեղութիւնը ազատելու համար:

— 2կայ ոչինչ անարդ բան՝ բան մարդու արիւնը՝ թափուած չնչին պատճառով. չկայ և ոչինչ պատուական բան՝ բան այդ արիւնը՝ թափուած գեղեցիկ պատճառով:

Մեծախօս մարդը նման է սայլի վնասուած անիւին, որ ստատիկ աղմուկ է բարձրացնում:

— Նրանք, որ բարի խորհուրդներ են տալիս՝ առանց օրինակը հետը տալու, նման են այն վերտօի-սիւներին, որ ճանապարհը ցոյց են տալիս, բայց ճանապարհորդի հետ չեն դնում:

— Ուրիշներին միշտ ներեցէք. խել ձեզ ոչ՝ կրբէք:

— Պատիւը նման է աչքին, որ չէ կտրողանում հանգուրժել նոյն խել ամենափոքր անմարդութեանը՝ առանց սրբելու:

— Երեք բան կայ, որ միայն երեք դիպուածում է իմացում. քաջութիւնը՝ պատերազմում, հսգու արիւթիւնը՝ վտանգի ժամանակ և բարեկամութիւնը՝ թշուառութեան ժամանակ:

— Այն մարդը որ վախենում է սրտաղէտ Աստուծոց, այնպիսի բան չի անի, որ հակառակ լինի առաքինութեանը:

— Առաքինութեան ազրիւրները անսպառելի են, որքան մարդ գործ է ածում, այնքան նա բազմապատկւում է:

— Երկու տեսակ բարոյականութիւն կայ

(ւնուայ) կրաւորական՝ որ արդելում է շարագործութիւն անելը, և ներգործական՝ որ հրամայում է բարեգործութիւն անել:

—Աստուած ոմանց լաւ սպրկելուն է օգնում, ոմանց լաւ մեռնելուն:

—Անպարկեշտ մարդը մի բայ նամակ է, որ ամեն մարդ կարող է կարդալ:

—Քրտութիւնը հորիզոնի նման է. որքան մարդ մօտենում է նրան, այնքան նա հեռանում է:

—Յոյն բանաստեղծ Մինանդրոսն ասում է. «Մեր կրծքում բնակում է Աստուած, դա մեր խիղճն է»:

—Համբերութիւնը կնոջ պարգաւանքն է և պատմարդու փորձաքարը: Համբերութիւնը սիրելի է երեխայի մէջ, դպիկի է երիտասարդի մէջ և ամեն տարիքի մէջ նա ղեղեցիկ է: (Տերտուլիանոս)

—Ոչ սր ինձ այնքան մնաս շի հասցնի, ինչքան որ ես ինքս. իմ սնուցած շարը միշտ հետս է. և երբ ես իրօք տան-

ջւում եմ, յանցաւորը ես ինքս եմ: (Ս. Բեռնարդ):

—Այնպէս աշխատիր որ իբր թէ յաւիտեան պէտք է տպրես. այնպէս ապօթիք, որ իբր թէ այսօր իսկ պէտք է մեռնես (Տոսկանեան ասած):

—Ամեն տեղ, ուր որ մի մեծ հողի մարմին է տալիս իր մտքին, տուջ է դալիս Գողգոթա (Հայնէ):

—Քիզկրական ղեղեցկութիւնը վաղանցուկ է, մտքի և բնաւորութեան ղեղեցկութիւնը՝ անթառամ (Սմայլս):

—Պատիւն ու շահը միշտ միևնոյն պարկում շեն լինում (Հերբէրտ):

II

ՉՈՐՄ ԹԻՈՎ ՊԻՏԱՆԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

—Չոս բան անգլիս եկե՛—Առողջութիւնը, Գիտութիւնը, Առաքինութիւնը, ապաստութիւնը:

—Չոս բան սպախանում է խոհեմութիւնը եւ ծոում է սողաւոր փունը.—Սէրը,

Ասելութիւնը, Երկիւղը, Չահասիրութիւնը:

— Չորս բանից է առաջ գալիս բարկութիւնը.— Ծաղրից, Ասելութիւնից, Աղիբարխաութիւնից, Անիրաւութիւնից:

— Չորս բան խրատ չեմ լնդումում.— Բարկութիւնը, Ազահութիւնը, Նախանձը, Մարմնի ստիպումը:

— Չորս բանից ծնում էն աշխարհիս ալեկն չարիքը.— Նախանձից, Ազահութիւնից, Հպարտութիւնից, Հեշտասիրութիւնից:

— Չորս գարեկի մոլորիս կալ.— Ասածուն ուրանալը, Հայրենիքին դաւաճանելը, Ծնողներին սպանելը, Ընկերոջը խարկը:

— Չորս բան է անհրամբես դաստարիւն.— Լսել զթածապէս, պատասխանել խոհեմապէս, նկատել մտերմապէս, Գտակ յայտնապէս:

— Չորս սեսակ բարեկամութիւն կալ.— Բախտի բարեկամ, որ հրածարում է, Էրբ բախտը յետ է գնում, Սեղանի բարեկամ, որ աներկութանում է, Տէնց որ սեղանը

հաւարում է, պաշտօնի բարեկամ, որ տեսում է, քանի որ պաշտօնի մէջ է. Հաւատարիմ բարեկամ, որ յարատեւում է մշտապէս:

— Չորս սեսակ մարդիկ բուռա են.— Ով միշտ մեղքի մէջ է, Ո'վ կարող է բարի անել, բայց չէ անում, Ով շղիակ ու չէ կամենում սովորել. Ո'վ զիտէ, բայց չէ կամենում սովորեցնել:

— Չորս բան խարում էն մարդու.— Չահաստացութեան ցանկութիւնը, Խօսքի բաղդութիւնը, Խելքի սակաւութիւնը, Կնոջ խորամանկութիւնը:

— Չորս բան վայել չէ' իմաստունի բերանին.— Չգովելին գովելը, Գովելին չգովելը, Չհասկացողին ներհակելը, Անամօթարար կռուելը:

— Չորս բան համարում են քիչ հարկաւոր, բայց շատ են հարկաւոր: Պատուել ամենքին խօսքով, Խօսել ճշմարտութիւնը, Չզայրացնել ոչ ոքի, Կենցաղավարել առարինի մարդկանց հետ:

V. ԸՌՈՂՋԸՊԸՀԱԿԵՆ

Մարդու կեանքի բնական սահմանը

Ընչիշատակ ժամանակներից սկսած, մտածող մարդիկ ջանացին սրռչել մարդկային կեանքի բնական շափն ու սահմանը: Գեղիսդը հաշուում է, թէ ազաւը ապրում է մարդուց ինն անգամ աւելի, եղնիկը ազաւից—չորս անգամ աւելի և այլն. և այս հաշիւը նա շարունակում է մինչև փիւնիկս թռչունը և ծովահարսը, որոնց դոյութեանը չէր կարելի չհաւատալ այն ժամանակ: Պլինիոսը աւանդում է մեզ Պետեղիբիսի կարծիքը թէ կարելի է Իտալիայի մէջ ապրել մինչև 144 տարի. յետոյ յայտնուեցաւ Էսկուլափի ուսումը, որ սնդում էր, թէ կեանքի սահմանը շափում է համատեղութիւններիով: Այս ուսման հետևողները այն կարծիքի էին, թէ երկարակեցութեան օրինակները հազուադիւրս են այն պատճառով, որ շատ մարդիկ ծնւում են լուսնի վերջերը և ապրելով վստանդաւոր տարիների ազդե-

ցութեան տակ, շեն կարող 54 տարուց աւելի երկարակեաց լինել: Էպիկէն չէր հաւատում, որ մարդ կարողանայ ապրել մինչև 112 տարի, Բերսդը—117 տարի: Էդրուսկների սրբազան մատենորկեանքի բնական չափը սահմանում էր 12 եօթնամեակի կամ 84 տարիների: Սոդոնը նոյնպէս հաւատ էր ընծայում եօթնամեայ շրջաններին, որոնք, նրա հաշուովը, մարդու կեանքի մէջ տասն էին, այսինքն 70 տարի: Պաղոմէոսի, Կարաոնի, Արկուլի և այլ հնագարեան իմաստասէրների կարծիքով մարդու կեանքի տեղութեան վերայ ազդում է մարդակների սնեցած դրութիւնը նորա ծննդեան վայրկեանին: Նոյն իսկ շափաւորութիւն սիրող Կոււնորոն հարիւր տարուայ կեանքը համարում էր վերջին սահմանը և հաւատում էր համատեղութեանց մարդու ճակատագրի վերայ ունեցած ազդեցութեանը: Բայց նորա կարծիքով, շափաւորապէս ապրելով, կարելի է նշանաւոր կերպով յիտածղել մահուան տը-

խուր վայրկեանը:

«Երկինքը ունի ազդեցութիւն, բայց դէպի շարք չէ գործածուած այն», ասում էր նա: Նոր կարծիքները մէջ նշանաւոր է Բուտտի յայտնածը. նա գտնելով որ օրդանական կեանքը ենթարկուած է խիստ մատենատիրական օրէնքներին և ճանաչելով 3 թիւը իբրև հիմնական թիւ, կեանքի ամեն մի շրջանին, տուեց 3²=9 տարի, իսկ բոլոր կեանքը արտայայտեց այս ձևով՝ 9²=81 տարի:

Բուրասիս, գերմանացի երևելի բնարանը բնական կեանքի չափը հասցնում էր 4000 եօթնեակի, կամ 76 տարու, 3 շաբաթուայ և 3 օրուայ: Մեր ժամանակը Փրանսիացի սուսումնական Փլուրանը կազմուածքի զարգացման գործողութեան վերջանալու հեշտ նշանը գտաւ սակարների կատարելապէս աճման և սխաւորութեան մէջ, որ մարդու մէջ աւարտուած է մինչև 20 տարին, ձիու մէջ 5 տարին, առիւծի՝ 4 տարին, շան՝ 2 տարին: Բազմապատկելով այդ թուերը 5

անգամ, գտնում ենք, որ ձին ապրում է 25 տարի. առիւծը՝ 20, շունը՝ 10—12 և այլն. այսինքն զարգացման շրջանից 5 անգամ աւելի: Եւ այսպէս բնական կանոնով մարդու կեանքը պէտք էր կարի 100 տարի: Մարդու ծերութիւնը Փլուրանը սկըսում է 70 տարուց: Նորա կարծիքով ծերութեան յատկանիշներն են՝ պատրաստ ունեցած ուժի կորցնելը՝ առանց նարբ ձեռք բերել կարողանալու:

Օդը որպէս կեանքի ապրիւր

Մի անգլիացի բժիշկ ասում էր, որ եթէ նրան առաջարկէին անպիտան կերակուր և անպիտան օդ, նա կընարէր առաջինը՝ իբրև երկու շաբաթ փոքրագոյնը:

Մեր կեանքի բնթացքը առաւել երկար և ախորժ տնելու մասնաճիշտ միջոցը անտարակոյս այն կլինէր, որ ամեն մարդ սովորէր կանոնաւոր շունչ առնել, որ նա աւելի ուղիղ խօսելով ենթարկէր իրան շնչառական մարմնավարժութեանը. որով-

հետև մինչև այժմ մարդկային ազգը շունչ է առնում մերենայապէս, առանց հասկանալու, անշափ, անհաշիւ:

Գերմանացի բժիշկ Լիւատերրախը, որ նուիրել էր իրան շնչառութեան գործարանների և սուսման սիրութեանը, բասկերէ՛կ կղանակ է առաջարկում օդը ներշնչելու և արտաշնչելու համար: «Կեանքը և կրակի բոցը նրանով են նման միմեանց, առում է Կիւլիէ, որ ոչ մէկը գոյութիւն չունին առանց օդի»:

Շնչառութիւնը կատարւում է գիշեր ցիբել, քնած ժամանակ, ծնունդու վայրկեանից մինչև վերջին շունչը: Օդը շնչառութեան հացն է ասաց Մաքս Սիման բժիշկը: Եւ եթէ օդը սնունդ է տալիս կեանքի լապտերին, հարկաւոր է որ նա բոլորովին մաքուր լինի, որ նորա մէջ ոչինչ վնասակար խառնուրդներ չլինեն:

Թռչունները, շրնայելով իրանց արագ աճմանը և սեռական անշափաւորութեանը, համեմատաբար մարդուց երկար են ապրում

և այդ խտրապէս այն պատճառով, որ նորա ծծում են մաքուր օդ: Թռչունների թսքրի մակերևոյթը բազմաթիւ ծակերով հագորդակցութիւն ունի մարմնի բոլոր մասերի հետ: Մինչև անգամ ոսկորների և փետուրների հետ: Ընտանի թռչունները որ գեանից չեն բարձրանում, աւելի պակաս են ընդունակ երկար ապրելու, համեմատելով այն տեսակների հետ, որանք բարձր տեղեր են բնակում և օդի առաւել բարձր խաւերում են թռչում:

Ծաղիկների վնասը

Ծաղիկներից բարձրացած ցնդական նիւթերը ոչ միայն ապականում են օդը, այլ և, եթէ նորա հաւաքւում են նեղ ու փակուած բնակարաններում, կարող են թունաւորիչ դառնալ մարդու համար:

Դարնի վարդագոյն ծաղիկը գիշերը ննջարանում զրած՝ մահ է պատճառել այնտեղ քնողներին:

Լանդոնում մի կին մեռած գտնուեցաւ

անկողնի մէջ. նորա մահը առաջ էր եկել
վոքրիկ ննջարանում զրուած շուշանների
բուրմունքից:

Բժշկապետ Տրիլերը մի աղջիկ է տեսել
մանուշակի հոտից մեռած:

Մի քանի տեսակ պտուղների հոտը
նոյնպէս նեղգործութիւն ունի, ինչպէս են
ծաղկանց հոտը:

Լիոնում մի կին իւր ննջարանում մի
զամբիւղ գեղձ էր թողել, որով միւս օրը
քաղցրութիւնի պիտի պատրաստէր. բայց ա-
ռաւօտը նրան մեռած գտան ննջարանում:

Սերկեիլի սասաիկ հոտն էլ կարող է նոյն
հետեանքները առաջ բերել: Մի կին այդ
պտղից մեծ քանակութեամբ զբել էր իւր
սենեակում: Դրացիները նորան կիսամեռ
զրութեան մէջ գտան այնտեղ:



Երբ մի քաղաքում յայտնուում է կամ մի
աւելութեան մէջ տարածուում է որ և է վա-
րակուժն, ամենքն սկսում են անհանգստա-
նալ. ամենքը ահ ու գողի մէջ են լիւում թէ
իրանց և թէ իրանց մերձաւորների կողմից:
Ի՞նչ զգուշութիւններ ասես որ շեն ձեռք
տանուում այդ հիւանդութիւնից ազատուելու
համար: Բայց կայ մի վարակիչ հիւանդու-
թիւն, որ ուրիշ հիւանդութիւնից տելի
կորստի է մատնում բոլոր ազգերին, և
ուշ որ նրանից չէ վախենում:

Այս վարակիչ հիւանդութիւնը արե-
ցութիւնն է, որ մարդկանց նեղը յժող շա-
րիքներից ամենամեծն է. շարիքներից ա-
մենամեծն է առաջին՝ այն պատճառով որ
նա միտամանակ իշխում է երկրագնդի
ամեն աշխարհներում, երկրորդ՝ այն պատ-
ճառով որ նրան չեն կարողանում դա-
ղարեցնել կառավարութիւնների ո՛չ մի
ջանքերը. և երրորդ՝ այն պատճառով, որ

նրա կորստաբեր հետեանքները փոխանց-
 ւում են սերնդից սերունդ, մինչդեռ ժան-
 տախար (շուաման), հնգախար (խոլերան)
 և այլ վարակումներ, սրբան էլ թշուառու-
 թիւնների պատճառ դառնային, այնուա-
 մենայնիւ մի յայտնի ժամանակից յետոյ
 դադարում են. իսկ զլիսաւորը՝ այն պատ-
 ճառով, որ մարդիկ այն աստիճան են ըն-
 տելացել արբեցութեանը, որ ոչ միայն
 անհոգ և ուրախ են անձնատուր լինում
 նրա կորստաբեր ազդեցութեանը, այլ մինչև
 անդամ մի դարմանալի պատրաստականու-
 թեամբ զոհում են նրան իրանց բարդն ու
 կեանքը: Ի՞նչ ասես որ չէ անում, օրի-
 նակ, այն խեղճ արհեստաւորը, որի վաս-
 տակածը հազիւ է բաւականանում ընտու-
 նիքի պահպանութեանը, որ միայն թէ յետ
 չմնայ իր հետ քէփ-անող ընկերներից:
 Ի՞նչքան թշուառներ առնուազն վաշտը-
 նում են իրանց առողջութիւնը՝ արբեցող-
 ների ընկերութեանը պատկանելու պատ-
 ուից: Եթէ զերեզմանները բացուեն, այն

ժամանակ շատ հագարաւոր՝ ոգելից ըմ-
 պելիքներից թունաւորուած մարդիկ միա-
 ձայն կը յայտնեն մեզ, որ իրանց կրած
 թշուառութիւնների ու վշտի գլխաւոր մա-
 սը առաջ է եկել զինու զործածութիւնից:
 Փամանակ է, որ մենք, որ դեռ ապրում
 ենք աշխարհումս, հասկանանք այս բանը
 գերեզման իջնելուց առաջ:

Արբեցողը կամ բոլորովին չէ քնում
 կամ վատ է քնում. նա մի կողքից միւս
 կողքն է շուռ զալիս և զուր է աշխատում
 հանգստանալ. եթէ նրան յաջողւում է կարճ
 ժամանակով աչքը խփել, այն ժամանակ
 նրա քունը աղմկում է իրան ճնշող տե-
 սիւններով... Մէկին այնպէս է թւում թէ իր
 տունը այրւում է, միւսը տեսնում է կոխ-
 երբսրդին թւում է թէ սենեակի ամեն ուղ-
 դութիւնովը շներ, կատուներ և ուրիշ գա-
 վաններ են վազվզում, ցատրում են նրա
 մահճակալի վրայ և ուզում են խածնել ի-
 րան. պառկում են իր կրծքին ու խեղդում
 են իրան: Թշուառները այն ժամանակ յան-

կարծ սարսափած զարթնում են քրանշա-
դախ: Առաւօտը նրանք վեր են կենում ան-
կողմից անելի յօգնած, քան թէ նոր պառ-
կած ժամանակը:

Մակայն լինում են և դէպքեր, թէպէտ
և անլի սակաւ, երբ այդ տեսիլները ընկ-
նում են արբեցողների եակից մինչ անգամ
ցերեկը: „Հիւանդներիցս մէկը, ասում է
բժշկապետ Մարսէն, շարունակ փողոցնե-
ներում տեսնում էր իր զլխի վերևից կախ-
ուած շուաններ. միւսի աչքին ամեն բան
եկրու-երկու էր երևում. ոմանք տեսնում
են գետնի վրայ սողացող միջատներ: Այս
տեսիլները սովորաբար անհետանում են,
հենց որ մարդ ուշք է դարձնում նրանց
վրայ. բայց երբեմն դրանք այնպէս ճշմար-
տանման են երևում, որ հիւանդները հա-
ւատում են նրանց և շեն կարողանում ուշ-
քի զար Այսպէս, մի կառապան, որ շա-
րունակ տանջում էր արբեցութիւնից, սո-
վորաբար կառքը քշում էր փողոցի մի ծայ-
րից միւսը կամ ծուռ էր ձիաններին այն

երևակայեալ խոշնդոտների պատճառով, որ
նա տեսնում էր իր առաջը և որոնց առ
աչօք երևալուն լինելու մէջ նա համոզում
էր միայն դրանից յետոյ: Ընթերցանութեան
միջոցին երբեմն պատահում է, որ յան-
կարծ զիրքը խորատուգում է աղջամղջի
մէջ, և համարեա մի քանի վայրկեան կա-
տարեալ կուրանում է մտրդ»:

Մտաւոր ընդունակութիւնները նոյնպէս
զնասում են ոգելից ըմպելիքների վնասա-
կար ազդեցութիւնից... Մտաւոր ընդունա-
կութիւնների խանգարմունքը դարգացման
երեք աստիճան ունի. առաջին՝ զառան-
ցանք, որ կարող է կրկնուել մէկ կամ մի
քանի անգամ, բայց անցնում է և անողջ
դատողութեան կորուստ չէ պատճառում,
երկրորդ՝ մտաւոր ընդունակութիւնների
նշանաւոր կերպով տկարանալը և երրորդ՝
նրանցից կատարելապէս զրկուելը:

Արբեցողների ալս հիւանդութիւններից
առաջինը սպիտակ տենդն է, որ զլխաւո-

բապէս արտայայտուում է սոսկալի տեսիլ-
ներով: Այս դրութեան մէջ գտնուած հի-
ւանդը ուսած դէմքով և վայրենի աչքերով
բրբեմն նստում է անկողնի վրայ և պա-
տեբազմում է երեակայեալ թշնամիների
դէմ: Այդ ժամանակ արբեցողի աչքին եր-
կացող տեսիլները սարսափելի են լինում,
և նրանց հեռեկող գառանցանքը շարունակ-
ւում է մի քանի օր, երբեմն էլ մինչ ան-
գամ մի քանի շաբաթ:

Սովորաբար այս գառանցանքը շատ
հեշտ անցնում է խոր և տևողական քնից
յետոյ. բայց նա կարող է առաջ բերել և
դատողութեան աստիճանաբար մթազնիլը,
որ մարդու անասնտկան դրութեան կամ
ակարամտութեան է վերածում, և կտրու
է մինչ անգամ վերջանալ մահով...

Այս գառանցանքը յաճախ զբոսում է
հիւանդներին դէսի մարդաստղանութիւն կամ
օտիպում է խոյս տալ երեւակայեալ էակ-
ներին: Իրանց վախեցնող այս երևոյ նե-
րից շատ փախչելու միջոցին հիւանդները

իրական տուրկաներ չեն տեսնում և յո-
ճախ դիմենքը պատովն են խփում, ընկնում
են գետը...:

Գայ ժամանակաւոր մտախանդարման մի
ուրիշ տեսակը. սա տրամութեան, վշտի,
ամօթի, յուսահատութեան ու սարսափի
մտախանդարմունք է, որոնք շունեն որ և
է պատճառ:

Անձնասպանութիւնը շատ յաճախ այս-
պիսի դրութեան հետևանքն է լինում:

Հաշուած է որ անձնասպանութիւնների
 $\frac{1}{3}$ -ը կատարում է ոգելից ըմպելիքներ
դարձածելուց:

Բայց ամենից տխուրը այն դրութիւնն
է, երբ մտաւոր ընդունակութիւնները, մարդ-
կային բնութեան ամենաազնիւ մասը, շա-
րունակ տկարանում կամ վերջնականապէս
ոչնչանում են:

Գտտարեալ յիմարանալը, այնպիսին, օ-
րի ժամանակ մարդս կորցնում է իր մարդ-
կային կերպարանքը, յաճախ առաջ է գա-
լիս արբեցութիւնից: Այս յիմարանալը մեծ

մտասմբ գալիս է առաիճանորար. մտաւոր
ընդուսակութիւնները հետզհետէ տկարա-
նում են, և հիւանդը աննկատելի կերպով
նրանցից բոլորովին զրկուելու վիճակին է
ենթարկուում: Այսպիսի թշուառ արբեցողին
մնում է միայն բուսական կեանքը՝ առանց
գիտակցութեան ու շահերի դէպի շրջապա-
տողները:

Խելագարութիւնը արբեցութիւնից աւելի
շատ է առաջ գալիս, քան թէ ուրիշ որ և
է պատճառից: Խելագարների համար հիմ-
նում հիւանդանոցների վիճակագրութիւնը
ցոյց է տալիս, որ ոգևիւյց բնութիւնների
գործածելուց առաջ կկամ մտաւոր խան-
գարմունքների դէպքերի թիւը մեծանում է,
որքան շատ է տարածուում այդ գործա-
ծութիւնը:

Խելագարների հիւանդանոցը կառավա-
րող մի բժշկապետի 57,920 խնամքով ու-
սումնադիրած խելագարման դէպքերից եր-
կուս է, որ 10,717 -ը առաջ են եկել ար-
բեցութիւնից: Ի՛նչքան մի ազգի մէջ խմող

շատ կայ, այնքան էլ նրանում շատ խելա-
գար կայ և ընդհակառակն: Ըստլանդիայում
որտեղ շատ են խմում, 563 մտաւորապէս
առողջ մարդկանց վրայ մէկն է գալիս խե-
լագար, այն ինչ Իսպանիայում, որտեղ
քիչ են խմում, 7,181 առողջի վրայ մէկ խե-
լագար գալիս: Լոնդոնում, որտեղ այնպէս
լնդհանրացած է արբեցութիւնը, բոլոր
խելագարների կէսը առաջ է գալիս արբե-
ցութիւնից:

Բարոյական անկումն՝ աւելի շատ քան դա-
տողութեան կատարեալ կորուստը, ոգևիւյց
բնութիւններ գործածելու ողբալի հեռանալն
է: Արբեցողը նախ և առաջ կորչնում է կա-
նանաւոր աշխատանքի սովորութիւնը: Տես-
նում է իր՝ մարդը առաջ գործունեայ, աշ-
խատող, իր ոտքին-գլխին նայող մի մարդ
էր, գինու սիրուցը զառնում է անհող, ծոյլ
սը՝ կայս նա ամեն բան զոհում է իրան ախ-
րապետած կրքին՝ իր պարտավունքները,
իր և իր զերգառտանի շահերը: Սիրտը
աշխատանքից կտրած, իր մերձայորները

հոգսը մտքից հանած, ամեն բանի մասին «բան չունեն» ասելով՝ նա թրև է գալիս զինետանից զինետուն և իր կրքին բառակա- նութիւն տալու համար՝ ոչ մի բանից չէ հրաժարուում:

Մարդու բարոյական անկումը ունե- նում է երեք հետևանք, որոնց հետ կապ- օւած են արբեցութեան պատճառած բոլոր թշուառութիւնները. ընտանիքի կործանու- մը, աղքատութիւնը իր բոլոր շարշարանք- ներով և յանցանքները:

Մենք ամեն օր վկայ ենք հանդիսանում արբեցութիւնից առաջ եկած ընտանեկան թշուառութիւններին:

Վիճակագրութիւնից երևում է որ բո- լոր աղքատանալու դէպքերից $\frac{2}{3}$ -ը ուղղա- կի կամ անուղղակի առաջ է գալիս արբե- ցութիւնից:

Գատաւորները, բանտերի կառուարիչ- ները, դատական և ոստիկանութեան ծա- ալոյողները, ամենքը միաձայն պնդում են՝ յանցանքների մեծ մասը առաջ է գալիս

միայն արբեցութիւնից: Բանտերում եղած 30 կալանաւորներից 20-ին օղին է ներս խոկել այնտեղ:

Ի՞նչ է, յիրաւի, համարեա ամեն գո- ղութիւնների պատճառը,—արբեցութիւնը. կողոստումների մեծամասնութեան պատ- ճառը,—արբեցութիւնը. անկարգ վարուե- ցողութեան պատճառը, — արբեցութիւնը. վէճերի, օստիկանութեան հետ ջաշրշուելու տնվայել զբոյցների պատճառը,—արբեցու- թիւնը. արբեցութիւնն է, միշտ աղբեցու- թիւնը: Մի խօսքով՝ զինին ի շարք գործա- դրելը բոլոր յանցաւորութիւնների գրեթէ ընդհանուր պատճառն է հանդիսանում: Բազ- մաթիւ օգնանքներից, ու պանդոկներից, այդ՝ ամեն յանցանքների ուսումնարաններից, տ- մեն օր դուրս է գալիս ժպիրհների, ան- գործ ու անբարոյական մարդկանց մի խումբ, որոնք միշտ պատրաստ են վատ բան անելու, որոնց գլխաւոր— ժամանակ անցկացնելը՝ առանց աշխատութեան փող ձեռք բերելն է, այսինքն՝ լոթութիւն ա-

նելը, զօղանալը, կօղոպակը նրա համար՝
որ ձևուր բերածը գինու տան խմեն:

Բոլոր երկրների դատարանների գլու-
նատները միաձայն ասում են, որ յանցանք-
ների մանաւանդ ամենանշանաւորների մեծ
մասը երբէք տեղի չէր ունենայ, եթէ այդ
յանցանքները կատարող մարդիկ տրբած
չլինէին:

Բայց բաւական չէ որ արբեցութիւնը
տնաբանդ է տնում այն մարդկանց, որոնք
նրան անձնատուր են լինում. նա փոխան-
ցում է ժառանկաբար, անբախտացնում
կամ չարիք է հասցնում անմեղ էակներին՝
արբեցողներից ծնուած երեխանցը:

Թուլացկոտութիւն, խլացաւ, խլութիւն,
ու համբուսութիւն—ահա այն տխուր ժառան-
գութիւն, որ շատ յաճախ ստանում են
արբեցողների որդիքը նոյն իսկ ծնուելու
միջոցին: Այդ խեղճ երեխաների մեծ մասը
մեռնում է այն հիւանդութիւններից, որոնց
նրանք ենթարկուած են սովորաբար

իրանց գոյութեան սկզբից. միւսների
Ֆիզիքական գորղաւելումը առաջ է գնում
անկանոն, կանդ է ստնում. նրանցից դուրս
են գալիս այնպիսի թշուառներ, որոնք
կրում են իրանց վրայ հայրերի մեղքերի
չարչարանքները:

Յիմարները մեծ մասամբ ծնում են
արբեցողներից: Ոմանք յիմար են նոյն
իսկ ի ծնէ, և նրանց դրութիւնը անուղղե-
լի է: Ոմանք ժառուրապէս պարզանում են
մինչև մի յայանի տարիքը, բայց յետոյ
նրանց զարգացումը դադարում է, և նր-
բանք այլ ևս չեն կարող յուսուլ առաջ
գնալու մասին: Արբեցութեան մասին գրը-
ւած մի նշանաւոր գրքի մէջ ապացույ-
ւում է, որ համարեա յիմարների կէսը ե-
ղել են արբեցողների որդիք: Խելագարնե-
րի համար հիմնուած բուժարանները կա-
ռավարող բժիշկները բազմաթիւ ապացոյց-
ներ են բերում այն բանի մասին, որ արբե-
ցութեան ենթարկուած ծնողների որդիքը
տրամադիր են ուղեղի խանգարման:

վերջացնենք մեր խօսքերը:

Գինին աւերում է մարդկանց մարմնա-
ւոր առողջութիւնը, ոչնչացնում է մտաւոր
ընդունակութիւնները, ապականում է ըն-
տանիքների բարեկեցութիւնը, կորցնում է
մարդկանց հոգիքը և նրանց սերունդը և,
չնայելով սրան, տարէցտարի աւելի է տա-
րածում ոգելից բնականութիւնների գործածու-
թիւնը և նրանցից առաջ եկած արբեցու-
թիւնը: Թէ՛ հարուստները և թէ՛ տղքատ-
ները այնպէս են կարծում թէ ուրիշ կերպ
չէ կարելի ուրախ լինել, եթէ ոչ արբած
կամ կիսարբած լինելով, կարծում են թէ
կեանքի ամեն կարևոր դէպքերում՝ մահե-
նիքի, հարսանիքի, մկրտութեան, միմեան-
ցից հեռանալու, միմեանց տեսակցելու ժա-
մանակ—ունեցած վիշտը կամ ուրախու-
թիւնը ցոյց տալու ամենալու միջոցը կա-
յանում է նրանում, որ մարդ խելառանայ
և զրկուելով մարդկային նմանութիւնից՝
նմանուի անասնին:

Եւ որ ամենից գործանալին է, ոյգ

այն է, որ մարդիկ քամարխտանում են
արբեցութիւնից ու քամարխտացնում են
այլոց, չգիտենալով թէ ինչու են այդպէս
անում: Յիրաւի, եթէ՛ ամեն մէկը հարցնի
իրան թէ մարդիկ ինչու են խմում, ոչ մի
կերպով ոչինչ պատասխան չի գտնի: Ե-
թէ՛ ասենք թէ գինին համեղ է, չի կարե-
լի, սրովհետև ամեն մարդ գիտէ որ գինին
ու գարեջուրը, եթէ ուրիշ բանով քաղցը-
րացրած չեն, անախորժ են թւում նրանց
համար, ովքեր նրանց խմում են առաջին
անգամը: Գինուն, ինչպէս և ուրիշ թոյնի,
ծխախոտի մարդ սովորում է քիչ քիչ, և
գինին միայն այն ժամանակն է դիւր գա-
լիս, երբ մարդ սովորում է նրա արտա-
դրած արբեցութեանը:—Եթէ՛ ասենք թէ
գինին օգտակար է առողջութեան համար,
նոյնպէս ամենևին չի կարելի այժմ, երբ
բոլոր բժիշկները՝ պարապելով այդ գոր-
ծով, խստովանուել են որ ոչ օղին, ոչ
գինին, ոչ գարեջուրը չեն կարող առող-
ջարար լինել, ոքովհետև նրանցում ոչինչ

սննդարար քան չկայ. այլ միայն կայ թոյն, որ միշտ վնասակար է:—Եթէ անկեր թէ գինին ուժ է աւելացնում, նոյնպէս չէ կարելի, որովհետեւ ոչ թէ մէկ կամ երկու, այլ հարիւր անգամ նկատուած է եղել, որ համահաւասար թուով խմող համքարը շատ պակաս գործ է շինում, քան թէ չխմող համքարը.—հետևապէս նրանում ուժ էլ քիչ կայ: Եւ հարիւրուոր ու հազարուոր մարդկանց վրայ կարելի է նկատել, որ լսկ ճուր խմող մարդիկ աւելի գորեղ ու առողջ են, քան թէ նրանք, ովքեր գինի են խմում:—Առում են նոյնպէս թէ գինին տաքացնում է. բայց այս էլ ուղիղ չէ, և ամեն մարդ գիտէ որ խմած (կոնծած) մարդը միշտ կարճ ժամանակով է տաքանում, իսկ երկուր ժամանակով աւելի կը սուռչի, քան թէ չխմողը:—Եթէ ասեմք թէ մահենիքներում, հորսանիքներում, մկրտութիւններում, տեսակցութեանց, միմեանցից հեռանալու, գնելու, ծախելու ժամանակնե-

րը մարդ աւելի լաւ է դատում այն դործի մասին, որի համար հաւաքուել են, —նոյնպէս ամենեին չի կարելի, որովհետեւ ամեն այդպիսի դէպքերում պէտք է ոչ թէ գինով յիմարանալ, այլ թարմ գըլխով քննել գործը. ուստի և թէ մարդ խմելու է, աւելի լաւ է խմի սովորական ժամանակը: Այն էլ չէ կարելի ասել, իբր թէ վնասակար կը լինի գինուց ձեռք քաշել այն մարդուն, որ սփորել է նրան, որովհետեւ մենք ամեն օր տեսնում ենք, որ խմող մարդիկ ընկնում են բանալ և այնտեղ ապրում են առանց գինու և աւելի առողջանում են: Զի կարելի ասել և այն, թէ գինուց աւելի է ուրախ անց կենում ժամանակը: Ուղիղ է, որ գինուց մարդիկ կարճ ժամանակով իբրև թէ տաքանում էլ են, ուրախանում էլ, բայց թէ մ'ուր երկար չեն տևում:

Եւ ինչպէս որ մարդ տաքանում է գինուց և աւելի վատ է մըսում, այնպէս էլ կո'ւրախանայ մարդ գինուց և աւելի վատ

կրտադտկանայ (կը տըրտմի): Բաւական է միայն որ մարդ մտնի պանգոկը և մի քիչ նստի ու տեսնի թէ ինչ կալի, աղմուկ կայ այնտեղ, որ հասկանայ թէ զինքն չէ ուրախացնում մարդուս:—Այն էլ չի կարելի ասել որ վնասակար չլինէր արբեցութիւնը: Նրա՛ թէ՛ մարմնին ու թէ՛ հոգուն տուած վնասը ամենքին յայտնի է:

Եւ ինչ: Ո՛չ համեղ է զինքն, ոչ օրննդարար, ո՛չ ուժ է տալիս, ոչ ասքացնում, ոչ գործին է օգնում, և վնասակար է մարմնին ու հոգուն—և այդուամենայնիւ ամենքը խմում են, և սրբան սուաջ ենք զնում, այնքան աւելի են խմում: Հապա ինչո՞ւ են խմում և անբաղդացնում թէ՛ լրանց, թէ՛ ուրիշներին: Մի պատասխան ունի սա. «Ամենքը խմում են և հիւրասիրում, չի կարելի որ ես էլ չխմեմ ու չըհիւրասիրեմ», պատասխանում են մարդիկ, և ապրելով արբեցողների մէջ, նրանց այնպէս է թւում, թէ ամենքն էլ խմում են ու հիւրասիրում: Բայց ախր սա ու-

զիդ չէ. դողը գողերի հետ ման կը դայ և իրան այնպէս կը թուայ թէ ամենքն էլ գող են: Բայց հէնց որ նա գողութիւնը թողնի և սկսի ման գալ ողնիւ մարդկանց հետ, իսկոյն կը տեսնի որ ամենքը չեն գող: Միևնոյնը կը պատահի և արբեցութեանը: Ամենքը չեն խմում ու հիւրասիրում: Եթէ ամենքը խմէին, այն ժամանակ մարդիկ շատ չէին ապրի, միմեանց ետեւից կը մեռնէին. քայց Աստուած չի թողնի որ այդ այդպէս լինի. միշտ էլ եղել են և այժմ էլ կան շատ ու շատ միլիոնաւոր շխմող մարդիկ, որոնք հասկանում են, որ խմելը կամ չխմելը հանար բան չէ, այլ որ եթէ խմողները ձեռք ձեռքի են զարկում և կամենում են ամբողջ աշխարհին խմեցնել, ապա ժամանակ է որ մտածող մարդիկ հասկանան, որ իրանք էլ պէտք է ձեռք ձեռքի տան և կուռն շարիքի դէմ, որպէս զի իրանց որդերանցն էլ չխմեցնեն մոլորված մարդիկ:

Ժամանակ է որ ուշքի գանք:

Գիմիայի պրօֆէսոր Ա. Պ. Պակից.

VI. ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ

Ի՞նչպէս նամաշել կարնասու

կովերը.

1) **Շահ կար են օտլիս** մյն կովերը, որանք

ա) թեթև կմախք ունին.

բ) բարակ կաշի.

գ) մեծադիր մարտողական խոռոչ, և

դ) եթէ նրա մէջ ճարպային շերտն

ու մկանունքները լաւ չեն զարգացած:

Ա. Կմախքի քերուարեան նշաններն են. կանացի փոքրիկ գլուխ բարակ ու թեթև եղջիւրներով, ոչ հաստ, մինչև անգամ դեռ բարակ ու կարճ ոտներ, բարակ պոչ և փոքր ինչ լայն կողեր. վերջինի մասին կարելի է դատել կողերի մէջ եղած տարածութեամբ. ինչքան որ նա լայն է, նոյնքան էլ սովորաբար բարակ են կողերը:

Բ. Կաշուի բարակութիւնն ու խաւրիւնը երևում է պարանոցի երկու

կողմերից, ուղղաձիղ անցնող բազմաթիւ ու սււրք նշմարելի ծալուածքներից: Կաշու այս յատկութիւնը կարելի է որոշել և շօշափելով նրա ծալուածքները, վերջին կող-սակրի մօտ:

Վ. Մարտողական խոռոչի մեծութիւնը հեշտ որոշում է կենդանու փորի ծաւալից: Ընդհանրապէս ցանկալի է, որ կովը լինի երկար, մեծ փարսլ և կարճարուն:

2) Կաթնոտ կովեր ջոկելու համար, բացի վերոյիշեալ նշանների ներկայութիւնը, պէտք է նայել, որ նրանք ունենան խոշոր ու գործող կաթնային գեղձեր (ծծեր):

Կարնային գելաներ

Ծծերի գլխաւոր մասը կազմում են կաթնային գեղձերը: Կովերն ունին այդպիսի երկու գեղձեր—**աջ** և **ձախ**: նրանք բաժանուած են միմեանցից անթափանցիկ միջնապատով, զրա համար էլ ըստինքն ունենում է մէջ տեղից անցնող և

պարզ կերպով նկատուող մի ահօս: Գեղձերը, իրենց երկարութեամբ, բաժանուում են երկու մասի, ստեղայն այս բաժանումը լիակատար չէ, որովհետև մի կէսից միւսն անցնում են շատ կաթնատար անցքեր, որի համար և ստիւնքը, բացի վերոյիշեալ ահօսից, ունենում է և մի քանի ոչ այնքան էլ պարզ նկատուող և ընդմիջող ալիօններ, որոնք բաժանում են նրան աջ և ձախ մասերի: Կաթնային զեղձերի առաջին և յետին կողմերից անցնում են, պրատուէններին համապատասխան երկու զոյգ տեղափոխող անցքեր:

Կաթնային զեղձերի մեծութիւնը շատ տարբեր են. մի կենդանու զեղձի ծաւալը երբեմն 8 անգամ աւելի մեծ է լինում, քան միւսինը:

Ամեն մի զեղձը բողկացած է բազմութիւ մանր փամփուշտներից այլվէօններից. այդ փամփուշտներից մի քանիսը միաձայնով, կազմում են **լարօն**, վերջիններս նորից միանալով միմեանց հետ կազ-

մում են աւելի մեծ **մասեր**, իսկ մասերը վերջապէս խմբում են **ցեղբերի**, որոնց միաւորութիւնից կազմում են զեղձերը:

Ամեն մի խորշ իրեն համար **ակցո** ուրի. որը միանալով ուրիշ խորշերի անցներին հետ, մտնում է **մեծ մասերի** կազմութեան մէջ. իւրաքանչիւր **մասը**, ինչպէս և խորշը, ունի աւելի մեծ տեղափոխող անցք, որը միանում է միւսին շեղքի մէջ գտնուած մասերի անցքերի հետ. վերջապէս շեղքերից իւրաքանչիւրը ունի արդէն բաւականին խոշոր անցքեր, որոնք բացում են իւրաքանչիւր պտուկի վրայ գտնուող առանձին խոռոչներում:

Կաթի կազմուելու սկզբնական տեղը կաթնային զեղձերի փամփուշտները կամ այլվէօններն են:

Ծծերը արտաքին կողմից դիտելով իմանալ կուլի կարճոս լինելը.

նախ և առաջ նա պէտք է լինի մեծ,

դա կաթնային գեղձերի խոշորութեան, որ միևնոյն է, այլվէօնների բազմաթիւ լինելու նշան է: Որքան զրանք շատ են, այնքան էլ շատ կլինի կազմուելիք կաթի քանակութիւնը: Սակայն պէտք է համոզուել, թէ արդեօք ստինքների մեծութիւնը կաթնային գեղձերի լաւ պարգայած լինելու հետեանքն է, որովհետեւ լինում են դէպքեր, երբ նրանց (ստինքների) մասերի և շեղրերի մէջ հաւաքուած է շատ ճարպ. այդպիսով ստինքները մեծ են երևում, բայց իրկապէս գեղձերը փոքր են:

Երգպիսի սխալի մէջ շընկնելու համար, նայում են կովի՝ այսպէս ասած, **պակեւա** ին ստինքի յետին մասում եղած կաշու ծալքին, որը գտնուած է կենդանու յետին ոտների մէջ: Ստինքը կթելուց յետոյ այդ ծալուածքը պէտք է աւելի մեծ լինի և հեշտ ձղուի, ծալուածքի կաշին լինելու է բարակ և փափուկ:

Պահեստի ծաղումը և նրա մեծութիւնն

ու փոքրութիւնը բացատրուած է շատ հասարակ կերպով. որքան որ կաթով լիբը ստինքի ծաւալների տարբերութիւնը մեծ է, որքան որ կթելուց յետոյ լաւ է քաշուած, փոքրանում ստինքը, այնքան էլ իճարկէ մեծ պէտք է լինի և պահեստը:

Բացի ստինքի մեծութիւնից պէտք է ուշադրութիւն դարձնել և նրա ձևի վրայ: Պէտք է խոյս տալ՝ թէպէտ մեծ, բայց հիւմքի (փորի) մօտ նեղ, պարկաձև ստինքից, իսկ ընդհակառակը աշխատել ջսկել տուջ զնայած և յետեից լաւ տարածուած, թասաձև ստինք ունեցող կով, մէկը միւսից հեռու գտնուած պտուկներով: Ցանկալի է, որ պտուկները հնարաւոր եղածի շափ միմեանցից հեռու լինին, որովհետեւ դա, անուղղակի կերպով ցոյց է տալիս, որ կաթնային գեղձերը խոշոր են և իրենց առաջին ու յետին մասերում: Իւրաքանչիւր պտուկը, գտնուած տեղի համաձայն, մօտաւորապէս համապատասխանում է իւրաքանչիւր **մասի** կենդո-

նին, որքան որ այդ կենդրոնները միմեանցից հեռու են, այնքան էլ խոշոր են այդ մասերը: Լաւ է եթէ պտուկը խոշոր է և ունի մօտաւորապէս կոնի ձև:

Վերջապէս կովի կաթնոտ լինելը սրուշկու համար, կարևոր է ուշադրութիւն դարձնել նոյնպէս և կաթնային երակների վրայ. այդ երակները ստինքից, փորի ներքևի կողմով, կաշու տակից դնում են տոաջ և հասնում են համարեա մինչև փորի կէսը և այնտեղ մտնում են որովայնի ներքին խոռոչի մէջ. նրանցով գնում է ստինքից դէպի սիրտը արիւն:

Պարզ է որ ինչքան մեծ են կաթնային երակները, նոյնքան աւելի արիւն է հստում ստինքից նրանց միջով, և այնքան նշանաւոր է հետևապէս կաթ շինուելու համար պէտք եղած նիւթերի քանակութիւնը:

Է՛նչպէս իմանալ կարի յաակութիւնը.

Կովի պարանոցի, աճուկների և ծծերի

մազերը շփելիս, եթէ երևում են այդ տեղերում խղատ, թեփ, այդ կովի կաթը իրագտ կ'լինի և որքան առատ է թեփը, այնքան էլ խղալի կաթը:

ΠΟΧΟΜΟΒΙ.-ից:

Աղի և ջրի նօսնակութիւնը կէնդանիների կերի մէջ:

Աղը օգնում է մարտողութեանը և պահպանում կենդանու առողջութիւնը: Կենդանիներին պէտք է տալ աղը որոշեալ չափով. ոչխարներին և խոզերին օրական 1—2 մսխալ, եղջերաւոր կենդանիներին 3—7 մսխալ, իսկ ձիերին 1½—3½ մսխալ: Աւելի լաւ է աղը լուծել ջրում և նրանով սրսկել կենդանու կերը (КОРМЪ): Աւելի ջահիլ և ծեր կենդանիները աւելի պէտք ունին աղի, քան միջին հասակ ունեցողները:

Ջուրը պէտք է լինի մաքուր, անզոյն

և անհոտ: Կենդանիներին տալու ջրի ամենալաւ տարութիւնը պէտք է լինի 5—12°: Ջրերի տեսակների մէջ ամենից նախապատիւը պէտք է համարել գետի ջուրը, եթէ նրանց մէջ չեն թափոււմ, գործարանների վատ արտաթորութիւններ, յետոյ աղբիւրինը, լճինը. իսկ հորի ջուրը միայն այն դէպքում, երբ նա մաքուր է և հորի մէջ չի ծծոււմ աղբային հիւթեր:

Նկատուած է որ մի օրում 70 զրվանբայ 10°ի սառը ջուր խմող կովը, կ'իսմէ 80 զրվ. 14—15° սենեակի ջուր: Իւրաքանչիւր աւել խմած 100 զրվ. ջրից կաթը աւելանում է 1 զրվ., բայց նրա միջի ճարպը մնում է նոյնը:



VII. ԺԵՄԵՆԵԿԸ ԳՐՈՒԹԻՒՆ

1. Համալսարհային պատմութեան Ամե. նախնականուր անցքեր

(Նախ քան Ծ. Քրիստոսի)

- 4578 Ազամի մահը.
- 3253 Ջրհեղեղը.
- 2940 2ինաց կայսրութեան սկիզբը.
- 2640 Ասուրը հիմնում է Նինուէն.
- 2300 եգիպտացոց թագաւորութեան սկիզբը.
- 2100 Բաբելոնի հիմնադրութիւնը.
- 1800 Մեծնոսր գրեթէ հնարում եղիպտոսում.
- 1651 Մովսիսի ծնունդը (+ 1531)
- 1571 Իսրայէլացոց դուրսգալը եգիպտոսից.
- 1531 Իսրայէլացիք մտնում են Աւստեաց երկիրը:
- 1500 Գիկրոսպը հիմնում է Աթէնքը.
- 1055 Գաւթի թագաւորութիւնը (ծն. 1085, թողաւոր օծուեցաւ 1063, † 1015).

- 1016 Սողոմոնի թագաւորութիւնը.— Զոմերոս
1004 Սողոմոնի տաճարի օրհնութիւնը.
980 Սողոմոնի մահը.
888 Լիկուրզոսը օրէնքներ է տալիս
Սպարտային,
900 Ասորեստանեայց թագաւորութեան
անկումը.
776 Ողիմպիական խաղերի սկիզբը.—
Յունաց դարագլուխը (Էռայ).
753 Հռոմուլոսը հիմնում է Հռոմը.
722 Իսրայէլացոց թագաւորութեան ան-
կումը.
624 Դրակոնի օրէնքները Աթէնքում.
606 Նինուէի կործանումը.
594 Սողոնի օրէնքները.
586 Նաբուզոդոնոսոսըը աւերում է Երու-
սաղէմը և այրում է տաճարը.
560 Գիւրոսը հիմնում է պարսից տէրու-
թիւնը († 1529),
557 Կոնփուկիոսի ծնունդը († 479).
550 Բուզդաշի վարդապետութեան սկիզ-
բը Հնդկաստանում.

- 533 Հրէայք Բաբելոնեան գերութիւնից
վերադառնում են Պաղեստինէ.
525 Պարսիկները նուաճում են Եգիպտո-
սը. Քատրերդակ Էսխիլի ծնունդը
(† 156).
523 Հին կտակարանը 70-ից ձեռքով
թարգմանւում է յունարէն լեզուով.
510 Հասարակապետութեան սկիզբը Հը-
ռովմում.
496 Սոփոկլէսի ծնունդը († 405).
484 Հերոդոտոսի ծնունդը († 408).
469 Սոկրատէսի ծնունդը († 399).
453 Երուսաղէմի վերանորոգումը.
452 Գրաւոր օրէնքների սկիզբը Հռոմում.
451 27 տարի շարունակուող պելոպոնե-
սեան պատերազմի սկիզբը.
393 Պլատոնի ծնունդը.
385 Դիմոսթինէսի ծնունդը († 322).
384 Արիստոտէլի ծնունդը († 322).
356 Աղէքսանդր Մակեդոնացու ծնունդը.
336 Աղէքսանդր Մակեդոնացին՝ բարձրա-
նում է գահը.

- 332 եգիպտոսում հիմնարկում է Աղէք-
սանդրիան.
- 327 Աղէքսանդր Մակեդոնացին արշաւում
է Հնգկաստան.
- 315 Չինական պարսպի շինութեան սկիզբը.
- 269 Փիլիսոփայական դպրոցի (չհուլայի)
հիմնադիր Էպիկուրոսի մահը.
- 264 Ստոյիկեան դպրոցի հիմնադիր Ջի-
նոնի մահը.
- 212 Արիստոտելի մահը.
- 70 Վիրգիլիոս Մարոնի ծնունդը.

ԲԲԻՍՏՈՍԻ ԻՆՈՒՆԳԻՑ ՅԵՏՈՅ

Քրիստոսի ծնունդը.

- 33 Քրիստոսի խաչելութիւնը.
- 41 Մատթէոս առաքեալը գրում է Աւե-
տարանը.
- 47 Ղուկաս առաքեալը գրում է Աւե-
տարանը.
- 60 Մարկոս առաքեալը գրում է Աւե-
տարանը.

- 64 Ներոնը այրում է Հոսմը. առաջին հա-
լածանքը քրիստոնեաների դէմ:
- 65 Սենեկա փիլիսոփայի մահը.
- 66 Ղուկաս աւետարանիչը գրում է
«Գործք Առաքելոցը»:
- 67 Պետրոս ու Պօղոս առաքեալները
մարտիրոսական մահը հռոմում.
- 70 Հոսմայեցոց Տիտոս կայսրը սուերւմ
է երուսաղէմը և տաճարը.
- 95 Երկրորդ հալածանքը քրիստոնեա-
նակի դէմ.
- 97 Յովհաննէո Աստուածարան Առաքեա-
լը գրում է Աւետարանը եփեսոսում.
- 107 Տրոյանոս կայսեր օրով երրորդ հա-
լածանքը քրիստոնեաների դէմ:
- 118 Աղրիանոս կայսրի օրով չորրորդ հա-
լածանքը քրիստոնեաների դէմ.
- 120 Պլուտարքոսի մահը.
- 130 Աղրիանոս կայսրը վերանորոգու է
երուսաղէմը.
- 135 Հրէայք ցրւում են ամբողջ աշխարհու մ.
- 140 Պաղոմէոս աստեղագետի մահը:

- 202 Մաքսիմելիանոս կայսրի օրով հինգ-
երորդ հալածանքը քրիստոնէաների
դէմ.
250 Գաբիոս կայսրի օրով վեցերորդ
հալածանքը քրիստոնէաների դէմ.
274 Ալբրիլիանոս կայսրի օրով ութերորդ
հալածանքը քրիստոնէաների դէմ.
303 Գրովգիտիանոս կայսրի օրով ինն-
երորդ հալածանքը քրիստոնէաների
դէմ.
303 Ս. Գրիգոր Լուսաւորիչը հիմնում է
Ս. Էջմիածինը:
305 Ս. Մեծն Կոստանդիանոսի թաղա-
ւորութիւնը (ծն. 274, † 337.)
321 Կիրակին տօնելու հրաման (17 մարտ.)
325 Առաջին տիեզերական ժողովը Նիկի-
այում՝ ընդդէմ Արիոսի.
328 Կ. Պօլսի շինութիւնը.
331 Բոլոր հեթանոսական մեհանները
կործանելու հրաման.
347 Ս. Յովհաննէս Ոսկերեւանի ծնունդը
(† 407).

- 381 Երկրորդ տիեզերական ժողովը Կ
Պօլսում՝ ընդդէմ Մակեդոնի.
390 Գրիգոր Աստուածարանի մահը.
400 Եկեղեցիներում զանգերի դարձածե-
լու սկիզբը.
421 Վենետիկ հիմնարկութիւնը.
431 Երրորդ տիեզերական ժողովը Եփե-
սոսում՝ ընդդէմ Նեստորի.
451 Չորրորդ տիեզերական ժողովը՝ ընդ-
դէմ Եւախիէսի:
476 Արեւմտեան հռոմէական կայսրութեան
անկումը.
496 Փրանկները ընդունում են քրիստոնէ-
ութիւնը (Քլոգվիկոսի մկրտութիւնը)
547 Օստ-գոթները այրում են Հոսմը.
570 Մահմեաի ծնունդը († 643):
622 Մահմեդի փախուստը Մեդինա. մահ-
անգալանների պարագլուխը.
637 Երուսաղէմը անցնում է Արաբներին
ձեռքը.
658 Վիտալիանոս պապը Աստուածուաչ-
աւթեան մատմնակը մտցնում է

- օրգանի դորձածութիւնը եկեղեցում
- 711 Երարները արում են Սպանիային:
- 725 Պատկերամարտութեան սկիզբը:
- 754 Պապերի իշխանութեան սկիզբը:
- 826 Քրիստոնէութիւնը բնդունում է Գանիայում:
- 827 Անգլիայի առաջին թագաւոր Եկերտը
- 855 Մլաւոնական Այուրենի գիւտը:
- 870 Արեւմտեան (հոռմայեցոց) եկեղեցւորժամուելը արեկեանից (յունաց):
- 965 Մեգիսլաւը քրիստոնէութիւնը մացրնում է Լեհաստանում.
- 1072 Երուսաղէմը անցնում է Սելջուկների ձեռքը
- 1096 Խաչակրաց արշաւանքների սկիզբը.
- 1099 Խաչակիրները առնում են Երուսաղէմը:
- 1139 Պորաուգալիայի թագաւորութեան սկիզբը. (Ա'լֆոնս Ա.)
- 1147 Երկրորդ խաչակրաց արշաւանքը.
- 1171 Առաջին բանկը Եւրոպայում (Վենետիկում)
- 1189 Էրբուրգ Խաչակրաց արշաւանքը:

- 1223 Մտրկութեան վերջացնելը Քրանսիայում.
- 1248 Եօթներորդ Խաչակրաց արշաւանքը.— Առաջին թղթայրամը Եւրոպայում (Միլանում).
- 1260 Առաջին լոճիկան ուսումնարանը (Քրանսիայում).
- 1267 Առաջին սաիկանութիւնը Եւրոպայում (Փարիզում).
- „ Դիաակի զիւտը.
- 1270 Ուլիերորդ խաչակրած արշաւանքը.
- 1279 Մոնղոլները նուաճում են Չինաստանը.
- 1291 Խաչակրած արշաւանքների վերջը.
- 1301 Կողմնացայցի զիւտը.
- 1308 Պոպական աթոռը փոխադրում է Աւինիոն.
- „ Հիմնում է Ըվէյցտրիկան հասարակապետութիւնը.
- 1321 Գանտէի մահը.
- 1338 Վառօգի գիւտը.
- 1348 Հիմնում է Փարիզի համալսարանը.
- 1380 Թնդանօթի գիւտը.

- 1384 Լանկիթամուրը արբում է Ասիային.
1415 Հուսի այրումը.
1431 Յովհաննես Գ՝ Աբբը այրում է Ռուսիում.
1440 Տպագրութեան գիւար.
1450 Ս. Պետրոս եկեղեցու հիմնադրութիւնը համում.
1453 Տաճիկներն առնում են Պ. Պոլիսը և վերջանում է Բիւզանդական կայսրութիւնը.
1483 Ինկվիզիցիայի սկիզբը Սպանիայում.
1492 Ամերիկայի գիւար.
1500 Բրազիլիայի յայտնագործութիւնը.
1502 Անիւաւոր ժամացոյցի գիւար.
1505 Խոտիշիկների վաճառման սկիզբը.
1506 Կոլումբոսի մահը.
1517 Յեզուիտութեան (սեֆորմացիայի) սկիզբը.
1519 Մագելլանի առաջին շարժերէրէայ ճանապարհորդութիւնը (124 օրում).
1520 Տաճիկները արբում են եգիպտոսին. — Ռաֆայէլի մահը.

- 1524 Առաջին ձեռագիրը լրագրները Սուրբ-սրբազան և Վիենայում.
1529 Մաքիաւելի մահը.
1546 Լիւտերի մահը.
1549 Պորտուգալցիք յայտնագործում են ձապոնեան.
1550 Գրուագրութուղթը Անգլիայում և Իտալիայում.
1572 Բարթոլոմէան գիշերը Փարիզում (հուգինոսների պատերազմները).
1615 Առաջին տպագիր լրագիրը.
1616 Ջեքսպիրի մահը. (ԾՆ. 1564).
1719 Երեւնամիայ պատերազմների սկիզբը Գերմանիայում.
1642 Դալիլայ աստեղագիտի մահը.
,, Ապակու գիւար.
1648 Վեստֆալեան հաշտութիւնը և 30-ամեայ պատերազմների վերջը.
1674 Միլտանի մահը.
1689 Ջոզեֆարժ մեքենաների գիւար.
1695 Լաֆսնտեհնի մահը.
1727 Նիւտոնի մահը.

- 1738 Գանուտ են Հերբուլանուսի և Պամպէյի աւերակները.
- 1756 Եօթնամեայ պատերազմի սկիզբը.
- 1764 Եղուիաներին հալածում են Փրանսիայից.
- 1767 Եղուեաներին հալածում են Սպանիայից.
- 1770 Գուկի ճանապարհորդութիւնը.—Աւստրալիայի յայտնագործութիւնը.
- 1778 Վալտերի մահը.—Փ. Փ. Ռուսոյի մահը (ծն. 1712).
- 1779 Օգտպարիկի գիւտը.
- 1781 Լեսսինգի մահը.
- 1783 Միացեալ Նահանգների սնկախուսթիւնը Հիւսիսային Ամերիկայում.
- 1789 Մեծ յեղափոխութեան սկիզբը.
- 1791 Մոցարտի մահը (ծն. 1756).
- 1796 Ստերէօտպի գիւտը.
- 1800 Մարմնի պատուաստի գիւտը.
- 1801 Վիմադրութեան գիւտը.
- 1803 Չոզենաւի գիւտը Փրանսիայում.
- 1804 Փրանսիայի կայսր Նապոլէոն Բ.

- 1805 Ջիլլերի մահը (ծն. 1769).
- 1812 Արագառիպ մամուլի հնարելը.
- 1815 Վատերլօօի պատերազմը.
- 1821 Նապոլէոն Բ-ի մահը ս. Հեղինէ կղզում.
- 1824 Բայրոնի մահը. (ծն. 1788).
- 1832 Պէօթէի մահը (ծն. 1749).
- 1838 Լուսանկարի գիւտը.
- 1847 Կալիֆօրնիայում սպի գտնուիլը.
- 1848 Ելքտրական հեռագրի գիւտը.
- 1856 Փարիզի սրահատարը,
- 1857 Բերանժէի մահը.
- 1861 Վիքտոր Էմմանուէլը հրատարակում է Իտալիայի թագաւոր.
- 1866 Աւստրօ-Պրուսական պատերազմը.
- 1869 Լամարտինի մահը.
- 1870 Փրանս-Պրուսական պատերազմը.
,, Պապերի աշխարհական իշխանութեան վերջը:
- 1871 Գիկկենսի մահը.
- 1873 Վիհննայի աշխարհահանդէսը.
- 1875 Հերցոգովինիայի և Բոսնիայի ապստամբութիւնը.

1878 Սոն Սահֆանօի հաշտութիւնը.—
Բեռլինի արակատար.

Ռուսաց պահպանութեան հաշտարանցիքը.

- 862 թուականին սկիզբն է դրւում ուսաց տէրութեան.
- 882 նովգորոգից յետոյ Պիէլը դառնում է մայրաքաղաք.
- 988 Ռուսները ս. Վլադիմիր Սվատոսլաւիչի նախաձեռնութեամբ յայնորից բնդանում են քրիստոնէութիւնը.
- 1028 Մեծ իշխան ետրուլաւ հրատարակում է ուսաց առաջին գրատար օրէնքը «Ռուսեկայա Պրաւդա» անունով.
- 1147 Իշխան Իւրիյ Պոլգորուիին հիմնում է Մոսկուա քաղաքը.
- 1222 Հիմնարկւում է Նիժնիյ-նովգորոգ քաղաքը.
- 1224 Թաթարներն ու Մոնղոլները 2ինդիս-թանի առաջնորդութեամբ յար-

ձակում են Ռուսաստանի վերայ և ուսւ իշխաններին (կնեազներին) իրանց հղատակեցնում.

- 1237 Թաթարների երկրորդ յարձակումը.
- 1238 Մոնղոլական լծի սկիզբը.
- 1240 Զվեգայիք ու Գերմանացիք յարձակում են Ռուսաստանի վրայ. սրանց նեղա դեպի մօտ յաղթում է ուսաց Ալէքսանդր իշխանը, որի պատճառով և կոչւում է Ալէքսանդր Նիվսկիյ.
- 1257 Հիմնարկւում է Վաղան քաղաքը.
- 1328 Մոսկուայի թագաւորութեան սկիզբը.
- 1380 Գմիտրիյ Գոնսկոյի առաջնորդութեամբ Ռուսները Գոն դեպր անցնելով յաղթում են թաթարներին.
- 1382 Թաթարները Թոխթամիլի առաջնորդութեամբ կողոպտում ու այրում են Մոսկուան և Ռուսներին նորից իրանց հարկատու անում.
- 1395 Լանկիթամուրը յարձակում է Մոսկուայեան տէրութեան վրայ.

- 1415 Ռուսաց քահանայապետութիւնը (երարխիայ) բաժանուած է երկու միաբարպետութեան՝ Կիևիեան և Մոսկուայեան.
- 1428 Հրաբձակ զէնքերի զործածութեան սկիզբը Ռուսաստանում.
- 1438 Ղազանի թագաւորութեան սկզբնաւորութիւնը.
- 1462 Ռուսաստանի միահեծան թագաւոր Յովհաննէս (Եօհանն) Գ-ի զահակալութիւնը.
- 1480 Մոնղոլական լծից ազատուելը.
- 1487 Ղազանի նուաճումը.
- 1491 Եկեղեցական—սլաւոնական լեզուով առաջին տպագրուած գիրքը Կրտկովում.
- 1491 Ռուսաստանում յայտնագործուած են արծաթի և պղնձի հանքեր.
- 1524 Բացում է Մոսկարիվի տօնավաճառը.
- 1547 Մեծ իշխան Յովհաննէս Գ.Գոռովին ընդունում է առաջին թագակիր թագաւորի տիտղոսը.

- 1552 Ղազանի թագաւորութեան միացուելը.
- 1556 Հաշտարխանի թագաւորութեան կ'ուտարեալ նուաճումը.
- 1558 Ռուսաց առևտրական յարաբերութիւնների սկիզբը Անգլիայում.
- 1563 Մոսկուայում սկսում է տպագրութիւնը.
- 1571 Ղրիմի թաթարները արշաւում են Մոսկուա և այրում.
- 1583 Ռուսները Սիբիրը առնում են թաթարներից.
- 1589 Մոսկուայում սկսում է ռուսաց պատրիարքութիւնը.
- 1596 Ռուսներից ոմանք շեղում են իրանց եկեղեցուց և ընդունում են պապի գերիշխանութիւնը (ունիայ).
- 1611 Լեհացիք առնում են Մոսկուան և Սմոլենսկը, իսկ Ղվեղացիք՝ Նովգորոդը.
- 1613 Սկսում է Ռոմանովների ճան դահակալութիւնը.
- 1612 Ռուսաստանը ազատում է Լեհերից.

- 1632 Առաջին կանոնաւոր դօրքը Ռուսաստանում.
1650 Հիմնարկում է Խար'կով քաղաքը.
1654 Մալոռոսիան միանում է Ռուսաստանի հետ.
1661 Ղալմուխները ընդունում են սուլայ հպատակութիւնը.
1672 Պետրոս Մեծի ծնունդը.
1689 Թագաւորում է Մեծն Պետրոս.
1695 Ռուսաստանում մտցւում է նուստորմիդ.
1699 1700 Թուականի յունուարի 1-ին հրատարակում է տարեգրութիւնը Քրիստոսի ծննդից սկսելու հրաման.
1701 Առաջին հասարակական թատրոնը Ռուսաստանում.
1703 Ռուսաստանում հրատարակում է առաջին լրագիրը.
1705 Քաղաքական զրկրով ապազրութեան սկիզբը Ռուսաստանում.
1710 Ռուսները ախրում են Լիֆլիանդիային և էստլիանդիային.

- 1711 Հաստատում է կառավարչական Սինոդը.
1713 Թագաւորական աթոռը Մոսկուայից փոխադրում է Ս.-Պետերբուրգ.
1721 Պետրոս Մեծը զարձևալ 10 տարի շվեդացոց դէմ պատերազմ մղելուց յետոյ հաշուում է և ստանում Կայսր ախաղոսը.
1725 Վախճանում է Պետրոս Մեծ կայսրը.
1739 Ռուսաստանում զանում է առաջին սովա հանքը.
1743 Ոչնչանում է մահուան պատիժը.
1754 Ռուսաստանում հիմնում է առաջին բանկը.
1755 Մոսկուայում բացում է առաջին համալսարանը՝ ըստ օրինակի գերմանական համալսարանների.
1767 Եկատերինա Բ. Վայսրուհին Օրլինագիրը է զրում.
1767 Ռուսաստանում մտցւում է ծաղիկ պատուաւոտելը.
1768 Ռուսաստանում սկսում է թղթա-

դրամի գործածութիւնը.

- 1783 Ղրիմը միանում է Ռուսաստանի հետ.
- 1785 Հիմնում է Կովկասեան փոխարքայութիւնը.
- 1786 Հիմնում է պետական բանկը.
- 1795 Սուլտրոզը առնում է Վարչագան և վերջանում է Լեհերի թագաւորութիւնը.
- 1797 Ս. Պետերբուրգում և Ղազանում բացւում է հոգևոր ճեմարան.
- 1801 Վրաստանը միանում է Ռուսաստանի հետ.
- „ Ոչնչանում են մարմնական ասնջանքները.
- 1802 Մինիստերստիօն.
- 1803 Մինդրեկիան միանում է Ռուսաստանի հետ.
- 1804 Իմերէթը միանում է Ռուսաստանին՝
- 1812 Ռուսները հալածում են Փրանսիացիներին.
- 1812 Ալէքսանդր Ա-ը առնում է աաճիկներից Բեսարաբիան. առնում է նաև Անդրկովկասը:

- 1814 Ռուսները առնում են Փարիզը.
- 1815 Լեհաց թագաւորութիւնը միանում է Ռուսաստանի հետ.
- 1815 Առաջին շաղկապը Նեվալի վերայ.
- 1819 Ս. Պետերբուրգում բացւում է համալսարան.
- 1830 Առաջին և մեծ խաչերան Ռուսաստանում.
- 1833 Ալէքսանդր Ա-ը տալազրում է «Սվոյ Զակոնով». անունով օրինագիրքը.
- 1837 Ա. Ս. Պուշկինի մահը.
- 1841 Մ. Ի. Լերմոնտովի մահը.
- 1844 Ի. Ա. Կուրլովի մահը.
- 1850 Նիկոլաեվալիյ երկաթուղու բացումն.
- 1852 Ն. Վ. Գոգոլի մահը.
- „ Վ. Ա. Ժուկովսկու մահը.
- 1853 Անդլո-Փրանսիական պատերազմի սկիզբը.
- 1855 Ալէքսանդր II կայսեր գահակալութիւնը.
- 1858 Ամուրեան երկիրը միանում է Ռուսաստանի հետ.

- 1859 Գերբի է առնուում Չամիլը և Արևելեան Կովկասը 60-ամեայ անընդհատ պատերազմներից յետոյ հպատակում է Ռուսաստանին.
- 1861 Ոչնչանում է ստրկութիւնը.
- 1864 Ռուսները նուաճում են Կովկասը.
- 1865 Ռուսաստանում թոյլ է տրւում ամենքին օրացոյց հրատարակելը.
- 1867 Թուրքեստանը միանում է Ռուսաստանի հետ.
- 1868 Գ. Ի. Պրսաքիվի մահը.
- 1873 Ռուսները նուաճում են Խիվայի լստանութիւնը.
- 1877 Ռուս-Տաճկական պատերազմը.
,, Ն. Ա. Նեկրասովի մահը.
- 1878 Ստորագրւում է Սան-Ստէֆանօի դաշնագիրը.
- 1883 Ի. Ս. Տուրգենեվի մահը.

**Հայոց պատմութեան նշանաւոր
անցքերը**

29 Թուականին մեր Արդար թագաւորը

նամակ է սղարկում Յիսուս Քրիստոսին, հրաւիրելով նորան զայլը մօտ:

- 31 Թաղէս առաքեալը գնում է եգիսիտ, ասնելով իւր հետ Քրիստոսի կողմուխ Ս. Գեղարքր և մկրտում է Արգարին ու շաաերին.
- 41 Ս. Ռուկոնցներից ու Սիւրիասեանցներից սահմանւում է մեր մէջ անպատական կեանքը.
- 50 Թաղէս առաքեալը նահատակւում է Հաւարշանում.
- 50 Թաղէս առաքեալի եղիշէ անունով աշակերտը նահատակւում է և թաղւում Արցախ դաւառի Գիս (այժմ Քիշ) զիւղում: Նրա նշխարների վրայ եկեղեցի կայ կառուցուած:
- 60 Թաղէս առաքեալի միւս աշակերտ Ստաթէսը նահատակուելով՝ թաղւում է Սիւնեաց դաւառում: Նորա նշխարների վրայ շինուեցաւ Տաթևու վանքը.

- 62 Բարդուղիմէոս առաքեալը նահատակում է Ադրակում: Նորա նըշխարները վրայ եկեղեցի կայ կառուցուած.
- 79 Հիմնարկում է Երևան քաղաքը.
- 197 Վաղարշ թագաւորը հիմնարկում է Վաղարշապատը.
- 253 Խոսրով թագաւորը հիմնարկում է Գաւրէժ (Թաւրիզ) քաղաքը:
- 257 Ծնւում է ս. Գրիգոր Լուսաւորիչը.
- 287 Տրդատ թագաւորը ս. Լուսաւորչին ձգում է Արտաշատի խոր վիրապը.
- 301 ս. Գրիգորը ելնում է խոր վիրապից.
- 302 ս. Գրիգորը հիմնարկում է ս. Էջմիածինը և այլ վանքեր:
- 338 ս. Լուսաւորչի թոռ ս. Գրիգորիսը Աղուանից կաթողիկոս է կարգւում:
- 390 Գառնիկ ճգնաւորը գտնում է ս. Լուսաւորչի նշխարները, որ և թաղում են Բարձր Հայոց Թորդան գիւղում:
- 406 ս. Մեսրոպը Մաշտոցը գտնում է մեր այրուբները.

- 451 ս. Վարդանանց պատերազմը և 1036 քաջերի նահատակութիւնը.
- 452 Գաթողիկոսական աթոռը ս. Էջմիածնից փոխադրւում է Գուլին քաղաքը:
- 458 Մեծին Վարդանայ դուստր ս. Ղուշանիկը նահատակւում է: Սորա մարմինը ամփոփւած է Թիֆլիսի Մետեխ անունով բանտի եկեղեցում:
- 489 Գտնւում են ս. Եղիշէ առաքեալի և Աղուանից Գրիգորիս կաթողիկոսի նշխարները.
- 507 Վահան Մամիկոնեանը վերանսրոգում է ս. Էջմիածինը:
- 532 Գիրակոս ճգնաւորը գտնում է Թագէոս առաքեալի և Սանդուխտ կուսի նշխարները:
- 539 Եղեսիայում յայտնւում է Արգարին ուղարկուած ս. Գոստառակը.
- 551 Աթանաս Տարօնացին Մովսէս Բ. Եղվարդացի կաթողիկոսի հրամանով յօրինում է նոր տոմար և սկսւում է մեր ազգային (Ն) թուակոնը:

- 619 Կոմիտաս կոթողիկոսը նորագում է
ս. Էջմիածինը և ս. Հսիսիսմանց
ու Գոյննեանց վանքերը:
- 640 Ներսէս Չինոյ կաթողիկոսը եկեղե-
ցի է կառուցանում խոր վիրապի
վերայ:
- 673 Վարագում Թողիկ ճգնաւորին յայտ-
նում է ս. Խաչը, և կարգում է
Վարագայ Խաչի տօնը:
- 706 Արարացոց Կաշմ անունով օտտիկանը
Նախիջիկան եկեղեցում կրակով 800
հայ իշխան է նահատակում:
- 874 Մաշտոց եպիսկոպոսը Սեան կղզու
վերայ եկեղեցի ու վանք է շինում:
- 924 Կաթողիկոսական աթոռը Գուինից
Վասպուրական է փոխադրում:
- 961 Չիրակայ Անի բաղաբը դառնում է
Յազրատաւնեաց մայրաքաղաք:
- 968 Խոռոզմանոյշ թագուհին կառուցա-
նում է Հսղրատ և Սանահին վանքերը:
- 993 Կաթողիկոսական աթոռը Վասպու-
րականից փոխադրում է Անի:

- 1080 Կիլիկիայում հիմնում է մեր իշխա-
նութիւնը:
- 1147 Կաթողիկոսական աթոռը Անիից աե-
ղափոխում է Կիլիկիոյ Հոսովկայ
քաղաքը:
- 1271 Հայերը Անիից դաղթում են Լեհաս-
տան:
- 1294 Կաթողիկոսական աթոռը Հոսովկա-
յից փոխադրում է Կիլիկիոյ Սիս
քաղաքը:
- 1311 Երուսաղէմում սկսում է մեր ազգի
պատրիարքութիւնը:
- 1323 Կործանում է Անի քաղաքը:
- 1293 Բոյրոզմէն վերջանում է մեր ազգի
թագաւարութիւնը:
- 1441 Կաթողիկոսական աթոռը Սոսից վերջ-
նականապէս վերադառնում է ս.
Էջմիածին:
- 1461 Կ. Պօլսում սկսում է մեր ազգի
պատրիարքութիւնը:
- 1513 Տաճիկները ավրում են Երևանին:
- 1567 Արղար Թագազեցին (Եղսկիային)

- Վենետիկում առաջին անգամ հայերէն սաղմոս է տպագրւում:
- 1603 Պարսից Չահարաս թագաւորը հայերին գերի է տանում Պարսկաստան:
- 1765 Սիմէօն կաթողիկոսը տպարան է հիմնում ս. Էջմիածնում:
- 1771 Մխիթար Սեբաստացին Վենետիկում հիմնում է Մխիթարեան Միաբանութիւնը:
- 1781 Հայերը Ղրիմից գաղթելով հիմնում են Նոր—Նախշեան քաղաքը:
- 1789 Հիմնում է Չուշի ամրոցը:
- 1798 Ղարաբաղից 1100 հայ ընտանիք գաղթում են Ղզլար ե այլիւր:
- 1799 Վենետիկում հրատարակւում «Ճարեգրութիւն» անունով առաջին պարբերական թերթը:
- 1815 Լազարեան հայ իշխանները Մուկուայում ճեմարան են կառուցանում:
- 1823 Վախճանւում է հայր Միքայէլ վարդապետ 2ամչեանը:
- 1825 Ներսէս Աշտարակեցի արքեպիսկո-

- պոսը (սպա Ներսէս Ե. կաթողիկոս) Թիֆլիզում հիմնում է Ներսեհեան Ազգային Հոգևոր Գպարանոցը:
- 1828 40 հազար հայ դաղթում են Ռուսաստան:
- 1837 Հաստատւում է ս. Էջմիածնի ս. Սինոդը:
- 1841 Մուկուայում հիմնւում է Գասպարեան աղքատանոցը:
- 9857 Վախճանւում է Թիֆլիզում Ներսէս Ե. կաթողիկոսը 96 տարեկան, վարելով հայրապետութիւնը 14 տարի:
- 1858 Ղրիմու Թէսղոսիա (Քեֆէ) քաղաքում բացւում է Խալիպեան ուսումնարանը:
- 1860 Տոճկահայոց տրւում է ազգային «Սահմանդրութիւնը»:
- 1860 Կարգաւորւում է ս. Էջմիածնի Մատենադարանը:
- 1863 Բազում հիմնւում է հայոց մարդասիրական ընկերութիւնը:
- 1868 Ս. Էջմիածնում հրատարակւում է

- «Արարատ» ամսագիրը:
- 1869 Թիֆլիզում բացուում է ս. Գոյի-
նեան հայ օրիորդաց ուսումնարանը:
- 1873 Ս. Էջմիածնում բացուում է Գ!սր-
զեան ձեռնարանը:
- 1776 Ս. Էջմիածնում ապագրում է նոր
Չայնազրեալ Չարակոն:
- 1877 Թիֆլիզում բացուում է Յովնանեան
Մարիամնան Օրիորդական Ուսում-
նարանը:
- 1878 Բերլինի Վեհաժողովում Տանկահա-
յոց համար ստորագրում է ինք-
նավարութեան 61-րդ յօդուածը:
- 1881 Թիֆլիսում հիմնում է Գովհասեան
Հայոց Բարեգործական ընկերու-
թիւնը:
- 1882 Թիֆլիսում կայանում է Հայոց ա-
սաջին ընդհանուր Ուսուցչական
ժողովը:
- 1884 «Նոր-Գար» ամենօրեայ թերթի հրա-
տարակուելը:
- 1888 Մակար Ա. Կաթողիկոսը ընդունւում

- է Տիֆլիսում Կայսր Աղէքսանդր
III-ից և այցելում է Բագու և Գան-
ձակ:
- 1889 Պարսից Չահ-Նասրէզզինը այցելում
է ս. Էջմիածին:
- 1889 Արևելագէտ Ք. Պատկանեանի մահը:
- 1889 «Մուրճ» ամսագիրը հրատարակում է.
- 1890 Խաղաղոց թագածուանդին ս. Էջմ.
Մակար Կաթ. ընդունում է:
- 1891 Վախճանում է Մակար Ա. Կաթու-
ղիկոսը:
- „ Մկրտիչ Էմինի մահը Մոսկվայում:
- „ Բարեգործ Մ. Սանասորեանի մահը:
- „ Յայտնի գերասան Աղամեոնի և եր-
զիժարան Պարոնեոնի մահը.
- 1892 Զրօքհեաց հանգիսի ժամանակ
Տիֆլիսի վանքի կամուրջի խորտակ-
ուելուց 40 հոգի խեղդում են Կուր
գետում. հողեորականութիւնը ա-
զատում է:
- „ Կովհասում խօլերայի կտորածը:
- „ Մայիսի 5-ին ս. Էջմիածնի Համազ-

դային նշանաւոր ժողովը Հայրիկին և Մատթէոս Իգմիլլեանին կաթողիկոսական թեկնածուները տրեց:

- „ Դամառ—Գաթիպան վախճանուեց:
- „ Խորէն նարպէյ և Գարեգին Սրուանձաեան սրբազանների մահը:
- „ Խմբագիր Գրիգոր Արծրունու մահը:

1893 «Հայրիկը կաթողիկոս օծուեցաւ.

1894 Կ. Պօլում սարսափելի երկրաշարժ:

„ Զին-Նափոնական պատերազմը:

1896 Թագադրութիւն Կայսեր Նիկոլայ II և Կայսերուհւոյ Ալէքսանդրա Ֆէօդորովնայի:

1897 Յոյն-թրքական պատերազմը:

1898 Ռուսները զբաւում են Զինաստանի Պորա-Արտուր նաւահանգիստը:

„ Իսպանիայի և Ամերիկայի Միացեալ Նահանգների պատերազմը:

1899 Անգլիայի պատերազմը Տրանսպալ և Յոսանթեան հասարակագեա. հետ:

1900 Զինաստանում քրիստոնեաների կոտորածը և Ռուսաստանի, Փրանսիայի, Անգլիայի, Գերմանիայի, Աւստրիայի, Իտալիայի, Ամերիկայի, Միացեալ—Նահանգների և Եսպանեայի միաբան յարձակումը և գործողութիւնը Զինաստանում կարգը պահպանելու համար:

„ Փարիզում համաշխարհահանգէս:



VIII. ՏՆՆԵՐԻՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏՆՆԵՐ մկներից ազատ պահելու համար փախանակ կատուի և կամ զանազան թռչնատուր միջոցներ զործածելու, հարկաւոր է հետևող հասարակ միջոցը: Այն տեղերը, որտեղ մկներ կան, սէտքէ անկիւններում կամ արկղների, պթուների տակ ցանկ օջոջի (բամաշկի) ծաղիկ. մկների համար բոլորովին անտանելի է այդ հոտը և միանդամայն փախչում են դրանից:

Լայնվազի ձեռնացուցները մամուկու միջոց:—Պէտքէ վերցնել 1 մաս սկիպիտոր և 2 մաս բենզին իրար խառնել և սրբել ձեռնացուցների կեղտոտ տեղերը:

Միսը մի քանի օր պահելու համար, պէտքէ կարակ մի քանի կտոր, աչնպէս որ մի ֆունտը անել 3 կամ 4 կտոր, դնել կաէ կամ փայտէ ամանի մէջ, վերան բարակ աղ անել, խի յետոյ մի կամ երկու մատի հաստութեամբ ամուրի փոշի ցանել վերան. այդ ձևով պահուած միսը եփելուց

տաջ սէտքէ լաւ մարրել ամուր: Միսը այնքան թարմ մնացած կլինի, որ դժուար կլինի սրշել նոր մսից:

Նրէ մագները շատ իւղոտ են և փայլում են, լուանալ թանդ թէյով հետը խառնած բո՞ւ կամ միայն թէյով:

Երկրից կեղտերը կանելու միջոց:—Վերցնել ամենալաւ կարտոֆիլի ալիւր և խառնել ջրի մէջ այս խառնուրդը քսել շորի կեղտոտ տեղերի վերայ և թողնել մինչև շորանալը: Իսկ իւղոտ կեղտերը մարրելու համար ամենալաւ միջոցը հետևող խառնուրդն է. լցնել ամանի մէջ այրած մագնիկոտ (железная магнезия) վերան լցնել բենզին և խառնել, որ դառնայ մածուցիկ, ոչ այնքան ջրի: Այս խառնուրդը քսել կեղտոտ տեղերի վերայ և թողնել մինչև շորանալը: Եթէ անտաջին ամբողջ քսելուց կեղտերը չմարրուին, սէտք է կրկնել և երկրորդ անգամ, որից յետոյ անմիջապէս մաքրուած կլինին կեղտերը:

Ապիսակեղևը կեղտից լուանալիս

չուտ մաքրելու համար պէտքէ շորերը և փեյիտ կէս փութ շորին խառնել մի հացի դտալ ֆրանսիական սկիպիտար:

Մեռախէ: գործուածքները մաքրելու համար պէտքէ նախ լուանալ թէյի ջրի մէջ, յետոյ արագով, որի մէջ պէտքէ խառնած լինի մի քիչ շաքար, դեռ շըշորացած պէտքէ հարթել:

Քարթսնելու դէմ.—Այն պտհարաններում, որտեղ վտանգ կայ բորբոսնեւայ պէտքէ հոտաւէտ որնէ հեղուկ պահել բաց սամանով. սկիպիտարը աւելի լաւ է ներգործուծ:

Ձաւը հեշտ է մտրբում, եթէ մի բողէ տար ջրի մէջ, գցուի:

Պիւնդ միւր փափկանում է, եթէ այն ջրի մէջ, որի մէջ եփում է, մի քիչ բացախ խառնուի:

Մեռաղներ մաքրելու բաղադրութիւններ: Մեռաղներ մաքրելու համար նշանակուած օժանկիքը կարելի է պատրաստել հետեւեալ ձևով:

Հալեցնում են 5 մաս դեղին վաղելին կամ խոզի ճարոյ և խառնում են հետը 1 մաս կոլիոտար:

Սեւացած սակեղէն իւերը ստանում են կրկին իրանց փայլը երբ նրանց դնում են կփ տուած սապոնաջրի մէջը, լուանում են մաքուր. ջրով և սրբում են մահուգով:

Ոսկեգօծած ԵՐՉԱՆԱԿՆԵՐ մաքրելու կեար: Ոսկեգօծած շըջանակները պէտքէ մաքրել մեծ զգուշութիւնով, ըստ որում նրանց վրայի ոսկին շատ բարակ շերտ ունի: Եթէ շըջանակը աղտոտել են ճանճերը, այն ժամանակ լաւ միջոցն է խառնել նաշատիլրի ցքիի 10 մասը 40 մաս ցքիի մէջ հալեցրած ոսկանիական սապոնի հետ 1 մաս սապոնի մանրուկը 3 մաս ցքիի մէջ: Խառնուրդի մէջ թաթախում են բամբակը և թեթև կերպով քսում են շըջանակի վրայ, մինչև որ նա մաքրուի և փայլ ստանայ:

IX. Ս. ԼՈՒՍԷՒՈՐԶԻ ՎԵՍՏԵՆԸ (աւանդութիւն)

Բարձր Հայրի Գարանադեաց զաւարում,
Կրօնիկա քաղաքի մօտ, բարձրանում է Սե-
պուհ կամ Գոհանամք սարը: Հիանալի
սար: Նրա ամեն մի քարի տակից դուրս
են դալիս աղբիւրներ, անմահական ջրեր,
ձեան պէս սառն, արծաթի պէս պարզ:
Գարունը որ դալիս է և ձիւները հալում
են, այդ սարի վրայ սև տեղ չի մնում.
քար՝ ըն անդամ ծլում ծաղկում են, կա-
սես՝ եղեմական դրախտ լինի:

Ահա այս հիանալի սարի վրայ ճգնել է
ս. Լուսաւորիչը: Նա Տրդատ թագաւորին
գարձի բերելուց յետոյ, ոտով, Խաչ-Գա-
ւազանք ձեռքին, ման եկաւ ամբողջ Հա-
յաստան, կործանեց կռատունները, ցոյց
տուեց հայ ազգին ճշմարիտ Ասածու ու-
ղիդ ճանապարհը, մտաւ շառ գիւղ ու քա-
ղաքներ, Ասածու խօսքը քարոզելով թըշ-
ուառներին մխիթարեց, զիբրիններին ազա-



Գեներալ-լեյտ. Յ. Գ. ԼԱԶԱՐՅԱՆ
Ղարսը պաշարող Էլ Գուանդո

տեց, աղքատին հաց տուեց, ծարաւին ջուր.
ամեն տեղ եկեղեցիներ շինեց, վանքեր,
հիւանդանոցներ հաստատեց և այս բոլորը
նա արաւ Քրիստոս Աստծու գորութիւնով,
խաչ-պատարագի գորութիւնով: Այդպէս
երկար մտն գալուց մաշուած, զգալով որ
իւր վախճանը մօտեցել է, քաշուեց Գոհա-
նամբ սարի Մանեայ այրը աղօթքով անց-
կացնելու իւր վերջին օրերը:

Մանեայ այրը գանոււմ էր մի խոր
ձորի մէջ, իսկ այրի գլխին բարձրանում
էր մի սրածայր ժայռ. ամեն առտօտ,
լուսարացին ս. Լուսաւորիչն իւր խաչ-գա-
ւազանի օգնութեամբ՝ բարձրանում էր այդ
ժայռի գլուխն ու աղօթում էր:

Ամառուայ կէս գիշերներէից մէկն էր,
երկնակամարի վրայ հազարաւոր մանր սև
մեծ աստղեր փայլելում էին. արարաշխարհ
քուն էր մտել. ս. Լուսաւորիչը զգալով
իւր հոգու խորքում, թէ շուտով պիտի
մեռնի. դուրս էր եկել իւր այրից և բար-
ձրանալով իւր մշտական աղօթառեկը՝ ժայ-

ոի գլուխը, վերջին անգամ աղօթք էր անում:

Եւ շորած այդ ժայռի կատարին, ձեռներն երկինք համբարձած աղօթք էր անում: Վերջին անգամ բաց արաւ նա իւր սիրտը Աստու առաջ, խոստովանուեց իւր արած ու շարած մեղքերը, թողութիւն խնդրեց Աստուածանից և հանգիստ սրտով սպասում էր մահուան: Այն ինչ մահը ուշանում էր և ս. Լուսաւորչի սիրտը սկսեց ալիկսծուել: Ի՞նչն էր արգիօք նրան յուզում, ալիկսծում այդ վերջին րոպէին:

Նա իւր սրտում փափագ ունէր, մեռնող մարդու վերջին սուրբ ցանկութիւն. մահուանից առաջ ցանկանում էր իմանալ թէ հայոց ազգը, որին ծնել էր հոգեպէս, ւրի սիրուն անշափ շարշարանքներ էր բաշել, արիւն արցունք թափել, ի՞նչ վիճակ պիտի ունենայ: Ի՞նչ կլինի հայ ազգի բախտը — հարցնում էր նա ինքն իրեն, և անթիւ ու անհամար մտքեր պայտջա էին գալիս նրա գլխում:

«Ո՞վ գիտէ, ասում էր նա, իմ մահից

յետոյ ինչ օրի կրնինի հայաստանը. ո՞վ գիտէ, ո՞ր անօրինի սուրբ կգայ կրոնանայ հայոց խղճուկ ժողովրդի վրայ, կկործանի նրա վանքերն ու ժամերը, կհայհոյի հայքրիստոնէի հաւատը և դեռ քանի՞ քանի՞ թշուառութիւններ, դժբախտութիւններ պիտի դան հայ ազգի գլխին. իսկ եթէ յանկարծ հայ ազգը մահանայ, ուրանայ իւր Տէր Աստուծուն, որը յատուկ նրա համար մի անգամ էլ իջաւ հայաստան և Վաղարշապատում պատուիրեց մի տաճար կանդնեցնել իւր անուանը, և այս բոլորը մոռանալով՝ ուրոնայ իւր ժամն ու պատարադը, աստուածողիւր ս. կարգերն ու օրէնքները... Վայ, հաղար վայ այն դրժբախտ օրերին, երբ հայ քրիստոնէի անունն ու յիշատակը ազգերի միջից պիտի ջրնջուի»: Այսպէս էր մտածում նա և նրա սիրտը մորմօքում էր. մէկ կոմենում էր մխիթարել ինքն իրեն սակով «մի՞թէ Աստուած կմոռանայ իմ անշափ շարշարանքները և իւր հայրապետ խնամքը, սրով

այս ազգը հեթանոսական խաւարից փրկուեց»։ մէկ էլ նորից տարակուսում և առում էր. «իսկ եթէ մոռանայ և հայ ազգի անօրէնութիւնների և ապերախաութիւնների վրայ բարկանայ ու ջնջէ հայի անունը ազգերի շարքից, այն ժամանակ ուրիշ ժողովուրդները տեսնելով այս ազգի կործանումը իմ անունն ու յիշատակը պիտի անարգեն, իմ շարշարանքներն էլ կլինեն դուր ջանք, անօգուտ վաստակ»։

Այսքան անվերջ տարակուսանքների և կասկածների մէջ տանջուում էր ս. Լուսաւորիչն այդ կէս գիշերին ծունկ չարած ժայսի կատարին. և նա, որ իւր բոլոր աղօթքների մէջ չէր մոռացել կրկնել «Տէր, նայի՛ր իմ շարշարանքներին, խղճա՛ հայաց ազգին, աչքդ նրա վրայ լինի, թնկ հայի օջախի ծուխը չկտրուի, օր ու գիշեր քեզ յիշի, և քո փշից պինդ բռնի, քո օրէնքներդ պահի, պատուհասից ազատ լինի, շար թշնամուց չզերուի և յուրտեան ապրի», — այսպէս պաղատագին աղօթողը չէր

իմանում թէ իւր աղօթքն ընդունելի եղի՞լ է Աստուծոն, թէ ոչ, և այժմ նա իւր կեանքի այս վերջին ժամին ուզում էր անպատճառ իմանալ, բայց ինչպէս։

Նա ապաւինեց աղօթքին. աչքերը ձգւեց դէպի երկինք, ձեռքերը տարածեց և սկզբում փառք տուաւ Աստուծոն իւր անշափ ողորմութեան համար, որով զթաց հայոց ազգին, արժանի արաւ իւր լոյսին ի վերջոյ խնդրեց Աստուածանից, որ իւր սրտի վերջին փափագը կատարուի, իրեն յայտնի հայ ազգի ազազան։

Այսպէս նա երկար աղօթք արաւ, բայց պատասխան չստացաւ և ոչ մի տեղից։

Նրա շուրջը լուս էր ամեն ինչ։ Գարձաւ նայեց դէպ երկինք, կարծես այնտեղ ուզում էր կարդալ հայ ազգի ճակատագիրը, բայց երկինքի երեսին ոչինչ գրած չկար։ Անթիւ մանր և մեծ աստղերը փալփալում էին այնտեղ, սասն ծիծաղում էին. բայց պատասխան չէին տալիս։ Հեռուն, արևելեան լեռների յետեից դանդաղօրէն դուրս եկաւ ծերտ-

ցած լուսնեակը մուրը ու տխուր; նա էլ չզիտէր, կամ չէր կարող պատասխան տալ ու Լուսաւորչին:

Անցնում էին ժամեր միմեանց յեակից, մօտենում էր առաւօտը, երբ ու Լուսաւորչիչը սիւտի թողնէր այս ցուերի ծով աշխարհը, բայց իւր վերջին կամբը չէր կատարուել. պատասխան չէր ստացել: Այս պատճառով նա նորից վառ յուսով, կատարեալ հաւատով ապաւինեց իւր ազօթքին. նա մրմնջում էր շատ սրտաբուլիս ազօթքներ. ստում ու լաց էր լինում, լաց էր լինում ու ազօթում: Նրա աչքերը կարծես ջուխտակ ազրիւրակներ լինեն որոնցից հասւում էր արտասուքը, որը այտերի և սպիտակափառ մերուքի վրայով գլւրուելով թափւում էր իւր առաջ գտնուած քարի փոսի մէջ. բայց պատասխան չկար ու չկար:

Մինչ կէս գիշերը վաղուց էր անցել. լուսնեակը եկել կանգնել էր ու Լուսաւորչի գէմ ու գէմ և նայում էր նրան նայնպէս տխուր, նայնպէս մոլորական: Կարծես նա

էլ էր հասկանում հայաստանի մեծ սուրբի վիշաքը, բայց դարձան անել չէր կորոյ:

Իսկ ու Լուսաւորչի գլխին արար աշախարհ մթնել էր. ուզում էր երկինքը իւր գլխի վրայ փուլ գտը, կամ երկիրը պատուէր ու իրէն կուլ տար, որովհետեւ մրտածում էր, թէ՛ ուրեմն ես Աստու երեսից ընկած մի մարդ եմ, որ իմ այսչափ աղաչանքս ու պաղտաւանքս չի լսում, այս խեղճ ժողովրդի բախան ինձ չի յայտնում: Այսպէս շուարած մնացել էր տեղնուակոր շարած. նրա շուրջը մեռելային լուսիթիւն էր տիրում, ոչ ոք չկար որ մտիթարական մի խօսք տսէր. իսկ նա աչքը մէկ երկինք էր ձգում, մէկ երկիր, սաք ու ձոր ծանրացել էր նրա սրտի վրայ:

Երբորդ անգամը լինելով՝ նա նորից ազօթքին նուիրուեց. հեռացրեց իրենից իսպաս յուսահատութիւնը և ջերմաջերմ ազօթք արար. բայց այս անգամ, հակասակ իւր կամքին, չէր կարողանում շարունակել. նրա աչքերը փակւում էին, քունը տանում

էր, և նա խոր քուն մտաւ: Քնի մէջ նա տեսաւ մի մարդ, որ մօտեցաւ և այս աւե-
ախար տուեց «ս. Լուսաւորիչ, հայ ազգի և
Հայաստանի ս. Հայրապետ, Աստուած լսեց
քո խնդիրքը և իմ բերանով յայտնում է
քեզ իւր կամքը, հայ ազգը երբէք չպիտի
ջնջուի աշխարհիս երեւոյց. նա, իրաւ է,
չառ շարչարանք պիտի տեսնի, շատ նե-
ղութիւն պիտի քաշի, շատ արիւն արցունք
պիտի թափի, բայց շիպիտի ջնջուի: Ազ-
գերն պիտի զան ու զնան, մինչ հայր իւր
Ասածով ու քս անոնովը, իւր իջման տե-
ղավը, իւր խաչով, ժամովն ու պատարա-
գովն անասան պիտի մնայ, իբրև առա-
ջին քրիստոնեայ սուրբ: Ճառել պիտի կան
երկպառակութիւն պիտի հանեն, եղբայր
եղբօրից բաժանեն, բայց վերջ ի վերջոյ
այդ շարքը պիտի խափանուեն, աշխար-
հիս շորս կողմ ցրուած բոլոր հայերը քո
անունով պիտի միանան, իրենց հաւատն
ու սուրբ կարգերը պիտի պահեն և թէ
այդ բոլորը այդպէս պիտի լինի, ահա քեզ

նշան. քո թափած արցունքը լցուած է
մի կանթեղի մէջ, որ առանց շլթայի կտի-
ուած է երկնքից. կանթեղը կզառուի տն-
պատրոյզ, երկնքի ու երկրի միջև: Դա է
ահա հայի ճրագը, քանի նա վառ կմնայ,
այնքան ժամանակ հաստատ կլինի հայ ազ-
գը. այդ կանթեղը տեսանելի կլինի միայն
հոյերին և հայերից էլ մենակ արժանա-
ւորներին. նրանք հաւատով պիտի նայեն
և պատմեն բոլորին, թէ տեսանք հոյի ճը-
րագը, մեծ և օրհնեալ է հայ քրիստոնէի
ս. Լուսաւորչի Աստուածը»:

Այս բոլորը շատ որոշ լսեց լուսաւո-
րիչը, ուրախութիւնից քնից վեր թաւ հո-
գով զուարթ, հոգով ցնծուն: Նայեց երկն-
քի երեսին. այնտեղ հեռում վառում էր
մի կանթեղ, որ կարծես ճիշտ Հայաստա-
նի մէջ տեղը կախուած լինէր, և նա մի
լոյս էր արձակում, այնպէս մեղմ, այնպէ՛ս
սիրուն: Միւս կողմից ազօթարանն սկսել
էր բացուել. ասրի թռչուններն արթնացել
և ուրախ ճուռողիւնով բարի լոյսի Ատար-

ծան Լին փոքարանում. մի խօսքով ողջ աշխարհը ս. Լուսաւորչի հետ ուրախացիլ էր. իսկ նա ինքն իւր սրտի փափագին հասած, հոգեզմայլ սրտով գոհացաւ աստուածանից նրա անձար բարութեան համար:

Այլ միջոցին արեւելեան սարերի յետեից դուրս եկաւ արեւը և նրա շողերից մի փունջ ընկաւ ս. Լուսաւորչի ղէմքի և սպիտակափառ միրուքի վրայ: Այս տեսնելով Հայաստանի սուրբը՝ չըբոժ տեղից վեր կացաւ, իւր ժպտուն և յուսարից աշքերով նայից վերջին անգամ ողջ Հայաստանի չորս բոլորը, մի պահպանիչ ասաց և խաչակնքելով տեսնազրեց: Յետոյ գարձաւ ղէպէ հայի ճրագը, նրա սիրուն, մեղմիկ լոյսը զրաւեց նրան և այլևս չկարողացաւ իւր աշքը հեռացնել կամ շարժիլ և նա զգալով որ վախճանը մօտ է, յենուեց իւր զաւազանի վրայ և մրմնջաց. «Աստուած իմ, այժմ պատրաստ եմ, ահա Հայաստանը, ահա նրա պատարագի սեղանը՝ այս սուրբ սարը և ահա ես հայ ազգի կենդանի և

անմոռունչ ողջակէզս, ա՛ռ ընդունիր:

Այս ասաց և իւր տրդար հոգին տանդեց: Նրա մարմինը կանդնած մնաց ոտների վրայ, յենուած իւր գաւազանին. նրա աշքերն այնպէս բաց յառած մնացին հայի ճրագին:

Այսպէս վախճանուեց Գարանազեաց զաւառի Գոհանածք սարի զագաթին կանդնած ս. Լուսաւորիչը, հայ ազգի պահպան հրեշտակը: Նրա սուրբ մարմինը գտան հովիւները, բայց չձանաչելով՝ վերցրին մի տեղ թաղեցին. մինչև որ Աստու հրամանով զտնուեցան ս. Նշխարները: Քրիստոնեայ ազգերն այս իմանալով՝ մարդիկ սեղաբեցին նրա մասունքից տարան շատ հեռուներ. բայց նրա սուրբ աջը, որով խաչակնքում, տեսնազրում էր Հայաստանը, մնաց մեկ՝ հայերիս մօտ, իրը սրբբազան աւանդ մեր ս. հայրապետից. իսկ այն ուստուածավառ ճրագը կախուած է ահա քառագագաթ Արագածի կատարին. այնտեղ վառում է Լուսաւորչի արցունքը

աղօա լայս արձակելով և ո՞վ գիտէ, դեռ
ես քանի՛ քանի՛ դարեր շարունակ պիտի
վառուի այնտեղ հայ ազգի հոգևոր կեն-
դանութեան երաշխիքը՝ այդ սուրբ կան-
թեղը:





Կովկ. բանակի սպարապետ
Մ. ԱՆՏՈՒՄԻՆՍԿԻ

Ճ. ԱՆՏՈՒՄԻՆՍԿԻ ԿՕՄՍ ՄԻՔԱՅԷԼ ԱՌՈՒՄԵԼԻՔԵԱՆ

Այն ժամանակամիջոցին, երբ Ռուսաստանը դրացի մահմետական աէրուլթիւնների հետ ունեցած կուրց դուրս էր գալիս յաղթանակով և Պարսկաստանը օտորացած և իսպառ թուլացած անյաջող պատերազմից, պարտաւոր էր յանձնել Ռուսիային հայկական հին գաւառները, այդ իսկ միջոցին հայ ազգի համար լուսաւոր ապագայի արշալոյսը ծագեց և հայ ազգը, որ նոր կեանքով ապրելու էր կոչւում ռուսաց թագաւորի հովանաւորութեան ներքոյ, ռուսաց պարտքի տակ շմաց:

Պետական և պատերազմական այն գործիչների ցուցակում, որ Հայաստանը այն ժամանակ տուեց Ռուսիային, պայծառ փայլում են Ռէհրուլթեանի, Արղուլթեանի — Երկայնարագուկի, Լազարեանի, Տէր-Ղուկասեանի, Չէլիովնիկեանի և միւսների անունները:

Բայց բոլորից պայծառը և բոլորից հռչակուածը Կոստ Միրայէլ Լօռու-Մեկլիքեանի անունն է:

Լօռու-Մեկլիքեանը հայկական բնտիր բնասանիքներին էր պատկանում իւր ծագումով:

1843 թ. Միրայէլ Լօռու-Մեկլիքեանը սուսումն աւարտելուց յետոյ, մտաւ զինուորական ծառայութեան և 22 տարեկան պօրուշիկ դառնալուց յետոյ սկսեց մտածել Կովկաս վերադառնալու մասին, որտեղից պոստերազմների աղաղակներ էր լսում և զէնքի հնչիւնները հրապուրում էին զինուորական հակումների տէր մարդկանց: Նրա ջանքերը յաջող ելք ունեցան և նա 1847 թ. նշանակուեց տոանձին յանձնարարութեանց համար Կովկասեան տոանձին զօրաբանակի հրամանատար՝ իշխան Վօրօնցոյի մօտ:

Այս ժամանակից հէնց սկսուեց նրա բարձրանալը: Լ.-Մեկլիքեանը կարճ ժամանակուայ մէջ մասնակցեց պահազան պա-

տերազմների և 1854 թ. արշաւանքի ժամանակ, և երկու անմտաց կռիւներից յետոյ, Բայանզուրի և Բաշքարդիկլարի տակ նա ստացաւ «քաջութեան համար» ոսկե սուր և երբ ուսաց զօրքը Երկրորդ անգամ անցաւ Ախուրեանը և սկսեց Քիւբեր-Գարի արշաւանքը, Լ.-Մեկլիքեանի հրամանի տակ արուեց մի առանձին օտրեազ (չօրախումբ) 300 կամաւորներից բաղկացած, որ կազմուել էր հայերից, թուրքերից և մինչև անգամ տաճիկ-ղարափափախներից: Կամաւորների այս խմբով Լ.-Մեկլիքեանը մասնակցում է Արգինի և Գարաբաղի կռիւներում և վերջապէս Քիւրէկ-Գարա գիւղի զլխաւոր ճակատամարտի մէջ. այս կրուում 16 հազար ռուսներ ջարթեցին 60 հազարից աւելի լաւ սթաւառզինուած տօճիկներ: Այս կռուի համար նա վարձատրուեց Ս. Վլադիմիրի 3-դ աստիճանի շքանշանով: Միք. Լ.-Մեկլիքեանը շարունակում է կառուարել իւր կամաւորների խումբը, որ հասել էր 800 ձիաւորների: Նորա նշա-

նաւոր քաջագործութիւններին է պատկա-
նում Գողգուանի և Գէշեանի Սանդժակնե-
րի առնելը 1855 թ. ամառը, առանց տ-
րին թափելու և կամաւորների հետ նո-
րա փառաւոր մասնակցութիւնը Ղարսի
պաշարման մէջ:

Մուրազիէվը շափազանց գոհ էր նորա
գործերից և իւր նամակների մէջ «անփո-
խարինելի մարդ է» անուանում: Այս բո-
ւր յատկութիւնների շնորհիւ էր, որ Ղար-
սը անձնատուր լինելուց յետոյ, ժամանա-
կաւոր կառավարիչ նշանակեց Ղարսի:
Լ.-Մելիքեանի այս գործունէութիւնը գնա-
հատուեց արժանի կերպով և նա Գեներալ
Մայօրի աստիճանին բարձրացաւ:

1855-56 թուականների տաճկական պա-
տերազմը վերջանալուց յետոյ, Մ. Լօռու-
Մելիքեան մի առ ժամանակ անպաշտօն
մնաց:

1858 թ. սպրիլ ամսին Լ.-Մելիքեան
ստացաւ Արխաղիտայի կառավարութիւնը և
այդ ժամանակից սկսում են երևան գալ

նորա նշանաւոր վարչական ընդունակու-
թիւնները Արխաղիան այն ժամանակ նոր
աչք էր բացել արեւելեան պատերազմից
ստացած հարուածներից և կարօտութիւն
ունէր մի այդպիսի կառավարչի:

Արեւիեան Կովկասը նուաճելուն պէս,
Բարխաթինսկին բաց է անում Լ.-Մելի-
քեանի առաջ մի աւելի լայն վարչական
գործունէութիւն, նշանակելով նրան 1860
թ. հարաւային Գաղստանի կառավարիչ և
Դէրբէնաի գաղօսուալալի: Այտեղ նա
մտցրեց նոր վարչական եղանակ: Արխա-
ղիայում և հարաւային Գաղստանում ան-
ցուցած շորս տարին պարզեցին նորան
ս. Ստանիսլաւի 1-ին աստիճանի շքանը-
շան, Աննայի ժապաւէն, Վլադիմիր 2-րդ
կարգի և անուանական կայսերական շնոր-
հատութիւն: Լ.-Մելիքեանի անունը Կով-
կասեան ցեղերի մէջ արդէն այնքան հրո-
շակաւոր էր դարձել, որ երկու տարի ան-
ցած նա նշանակուեց Թեբեքի շրջանի կա-
ռավարիչ: 1863 թ. սպրիլի սկզբին նա

Վլադիկավկազ եկաւ. նոյն ամսի 17-ին կայսեր ծննդեան օրը, ստացաւ Գններալ Լէյտենանտի աստիճանը: Երկու տարի անցած, օգոստ. 30-ին նա հասաւ Գններալ-Ազիւտանտի աստիճանին: Թերեքի շրջանում նորա հռչակը, կարելի է ասել, հասաւ իւր գազաթնակէտին և կայսրը Լ.-Մելիքեանին նշանակեց Թերեքեան կազակային զօրքի շարքը իսկ յետագայում նորան նշանակեց Սուս-ժէն Վլադիկաւկազեան զնդի շէֆ: Իւր ամենաեռանդուն գործունէութեամբ Լ.-Մելիքեան այս երկիրը զրեց. քաղաքացիական բարեկեցութեան աստիճանի վրայ և այդ Գոմս Լ.-Մելիքեանին պարգևեց Գններալ-նահանգապետի իւրաւունքները երկրի կառավարութեան վերաբերմամբ և արժանապէս գնահատուեց «Սպիտակ առիւծի» շքանշանքով, Ալէքսանդր Նեւկու ադամանդեայ նշաններով և Գավալկերիայի զենեքալի աստիճանով:

Բայց հէնց այդ գործունէութիւնը, որ ի վերջոյ բայքոյեց Լօու-Մելիքեանի

սոսլաթիւնը, ստիպեց նրան թողնել իւր նշանաւոր պաշտօնը, և 17-ին սպրիլի 1875 թ. նա նշանակուեց պաշտօնով Գովկոսեան զօրարածնի հրամանատարի մօտ: Սակայն նորա հանգստութիւնը երկար չտեկեց: Այն ժամանակ, երբ նա բժշկուեմ էր արեաստհամուում, Գանուրի վրայ յուզեց սլաւօնական հարցը և Ռուսոստոնի ու Տաճկաստանի պատերազմը անխուսափելի դարձաւ:

Այն ժամանակուայ զինուորական նախարար Գ. Ա. Միլիտարնը կայսրին մատնացոյց արաւ Լ.-Մելիքեանի վրայ, որ Գովկոսեան երկրի վրայ հոսած դժուար հանգամանքներում կարող էր գլխաւոր հրամանատար և մեծ իշխան Միխայէլ Նիկոլակիշի գլխաւոր օգնականը լինել և նա նոյեմբերի 11-ին 1876 թ. նշանակուեց Տաճկա-Գովկոսեան սահմանում զարծող կորպուսի հրամանատար:

Տաճկական պատերազմի անցքերը տակաւին թարմ են մեր յիշողութեան

մէջ, Արղաճանի նուաճեցր Ալաջայի բարձրութիւններում տարած կոխը և Ղարսի անդուզական պաշարումը, անմիջապէս կապուած են Լ.-Մեկիքեանի անուան հետ: Բայց թողնելով մի կողմ նոյն իսկ զինուորական փառքը, Լօռու-Մեկիքեանի Ռուսիային արած ծառայութիւնները ասացին եղան:

Գէսրգի 3-րդ աստիճանի Արղաճանի համար, Գէսրգի 2-րդ աստիճանի մեծ խաչ Ալաճայի համար, Վլադիմիր 1-ին աստիճանի Ղարսի համար և Գոմսի կոչում պատերազմի աւարտման համար այս են այն պարգևները, որոնք պաշաօնապէս վկայում են նրա ծառայութիւնները:

1879 թ. յունուար ամսին նա նշանակուեց շաշտարխանի և Սարատովի ժամանակաւոր Գեներալ-նահանգապետի կոչումով արաւակարգ լիազօրութիւնով մաքառելու ժանտախտի դէմ: Ժանտախտից յետոյ, Ռուսաստանին սպառնաց մի նոր, և սարսափելի վտանգ, ներքին դաւադրութիւն, սրի

սկիզբը գրեց Ղարսիօզովի թագաւորասպանութեան փորձը: Գոյսրութեան կարգը ապահովելու անհրաժեշտութիւնը առիթ տուեց Ռուսաստանին հիմնել ժամանակաւոր Գեներալ-նահանգապետութիւններ: Լօռու-Մեկիքեան 1879 թ. ընդունեց իւր կառավարութեան ներքոյ Խարկովի Գեներալ-նահանգապետութիւնը, որ բաղկացած էր վեց սահմանակից նահանգներից և ընդամին նշանակուեց Խարկովի զինուորական շրջանի զօրքերի հրամանատար: Խարկովում նորա կառավարութեան միջոցին, հասարակական կարգի խանգարման մի դէպք անգամ տեղի չունեցաւ:

Այսպէս անցաւ մի տարի: Գաւաղութիւնը շարունակում էր գոյութիւն ունենալ և նորացնումները ժամանակ առ ժամանակ սկսեցին երևան դալ: Չմերային պալատի պայթումը լցրեց տէրութեան համբերութեան չափը: Սկսեցին խօսել զխրատատու հիմնելու մասին: Կոմս Լ.-Մեկիքեանը, որ այդ ժամանակ պատահաբար Պետերբուրգում

էր գտնուում, կանչուեց կայսեր մօտ և լսեց կայսեր հրամանը թէ պիտի Ռուսիայի կառավարութեան բոլոր մասերը կենդրոնացնել մի մարզու ձևաբուսում և այդ մի մարզը ընտրուած է Կոմս Լ.-Մեյլիքեանը: Այսպիսով կազմուեց բարձրագոյն կարգապրիչ յանձնաժողով: (Верховая распорядительная комиссия) և Լ.-Մեյլիքեանը իրրև նրա նախագահ, ստացաւ մի այնպիսի իշխանութիւն և մի այնպիսի նշանակութիւն, որպիսին այն դարուս ոչ որ չէր ունեցել: Այդ մասին հրովարտակ հրատարակուեց 1880 թ. փետ. 12-ին: Բարձրագոյն յանձնաժողովը կիսամեայ գոյութիւնից յետոյ փակուեց, նորա հետ միասին վերացուեց և III բաժինը (III отделение), որ բոլոր քաղաքական գործերի կառավարիչ մարմին էր: Փանդարմների կօրպուսի շէֆի կոչոււմը միացաւ ներքին գործերի նախարարութեան կոչման հետ, և այդ նշանուոր պաշտօնը, ստացաւ դարձեալ Լ.-Մեյլիքեանը:

Սրա հետ վերջացաւ և կամս Լ.-Մեյլիքեանի քաղաքական գերը: Իւր կեանքի վերջին տարիները նա անցկացրեց արտասահմանում-նիցցայում: Նորա աւուղջութիւնը, որ քաղքայուել էր ծանր աշխատանքներից, օրկցօր թուլացաւ և ազնիւ ձգտումներով լի կեանքը վերջապէս շիջաւ, հետու իւր սիրեցեալ Թիֆլիսից, օտարութեան մէջ: Կոմս Լօոու-Մեյլիքեանի աճիւնը վերադառնում է հայրենիք: Հողարաւար հայեր, որ պարծենում են Կոմսի ազգակցութեամբ և հարիւր-հարտըր ոռուս մարդիկ խորին վշտակցութեամբ ճանապարհ են գնում դէպի լուստենական հանգստարան այն մարզուն, որ իւր կեանքում հանգստութիւն ստած բունը շղիտէր:

Նորա մարմինը մեծ հանդիսով թաղուեց Թիֆլիսի վանքի մօտը եկեղեցու գաւթում:

ԱՐՉԱԿ ՏԵՐ-ՂՈՒԿԱՍԵԱՆ

Մի կողմ թողնելով նորա կեանքի մանրամասնութիւնները և հերոսական քաջութիւնները, բաւականանք հաղորդել միայն այն, ինչ որ հաղորդում է ուսու «Новое Время» լրագիրը:

«Մահը կրկին մի նոր գոհ յափշտակեց հին կովկասցիների միջից, առում է նա, յունվարի 18-ին, 1881 թ. Թիֆլիսում վախճանուեց Կովկասեան երկրորդ զօրաբանի հրամանատար Գիներալ-Լէյտենանտ Արչակ Տեր-Ղուկասեան:

Յիսներորդ թուականների սկզբներում մինք միասին էինք ծառայում մի վաշտի մէջ. ոչ սակաւ արշաւանքներ կառարկցինք Գաղստանում: Նա այնպիսի անձն էր, որի հետ մարդ մի անգամ ծանօթանալիս չէր կարող ընդ միշտ և անկեղծօրէն չբպատկառել նորա առաջ: Լինելով ազատ



Գիներալ ԱՐՉԱԿ ՏԵՐ-ՂՈՒԿԱՍԵԱՆ

րնաւորութեան տէր, տալետական վեհանձ-
 նութեամբ անշահասէր, միշտ հանդարտ ու
 անխռով, խսաիւ պահանջող պաշտօնական
 պարտականութեանց՝ կատարող, սակայն
 առանց իզուր տեղ յանդմիանելու և բար-
 ձրութայն սպառնալու, հանգուցեալն իւր
 մասնաւոր կեանքում, գրաւիչ գրուցուղ էր,
 բարեբաւութեամբ լսում ու ժպտում էր,
 երբ պատմում էին նորան՝ գտնադան ծի-
 ծաղաշարժ դէպքեր և առակներ: Չտտ
 րան կարծացած յարզող Քրանսիայի էնցիկ-
 լոպետիստներին և մանաւանդ Վօլտերին,
 որ իւր հետ ման էր ածում արշաւանքի
 միջոցին, հարուստ պէսպէս գիտութիւննե-
 րի պաշարով, նա երբէք չէր ձգտում, ի-
 րան շրջապատող սպաների մեծագոյն մա-
 սի առաջ ցոյց տալ իւր ուսումնականու-
 թեան գերազանցութիւնը, այլ ներդաշնա-
 կութիւն պահպանել այս, եթէ ոչ այնքան
 դարդացած, գոնէ բարեկիրթ և քաջ զինա-
 կից ընկերներէ հետ: Ամուրի ծերունին, որ
 իւր պիտոյքներէ մէջ, զիտէր փոքրով բա-

ւականանալ, չէ կարելի ասել, որ Սպարտացու նման զժնդակ կեանք կվարէր. նա ապրում էր, առհասարակ, իբրև սպայ, և ուրախութեամբ ընդունում էր իւր հիւրին, առաջարկելով նորան, այն ինչ որ Ասուած է ուղարկել: 1837 թուականին աւարտելով իւր ուսումը մի բարձրատարձան ճեմարանում, որ բուսէրէն կոչուում է ИМПЕРАТОРСКОЕ УЧЕБНОЕ СООБЩЕНІЯ, Տէր Աուկասեանը մի քանի ժամանակ ծառայեց Ս. Պետերբուրգում, իսկ յետոյ տեղափոխուեցաւ զէպի Պովկառ, բայց պէտք է ասել, որ ինժեներական պաշտօնը նա չհաւանեցաւ, որովհետև գօրա մէջ բոււրմբուլիւն չէր գտնում իւր միակցանկութեան՝ այն է փառասիրութեան: Մայօրի ստտիճանով նա ծառայութեան մտաւ Ալշեռոնեան հետևակ զօրքի մէջ, ուր նորան յանձնեցին մի բատալիօնի հրամանատարութիւնը մինչև 1858 թուականը, զսրանից յետոյ, Բարոն Ա. Ե. Վաանգելի առաջարկութեամբ, որ շատ յարգում էր Տէր-Աուկասեանին,

վերջինս ընդհանուր հրամանատար դարձաւ Աշխեռոնեան գնդին, որի մի բատալիօնով նա մտաւ այն զօրքերի շարքը, որոնք պաշարել էին Գունիբրը Արժանայիշատակ Օդեստոսի 26-ին, 1859 թուականին Աշխեռոնեան գնդի սրտորդները (յօժարակամ զինւորները) և նոցա հետ Արշակը մի բատալիօնով, առաջինն էին, որ բարձրացան Գոյնների գլուխը, շուտափոյթ անցնելով մի կրճի միջով, որ յօրդ անձրևներից կայացել էր ապառաժի վերայ. սպանեցին բոլոր լեռնական պահապաններին, և այսպէս գլխաւոր հարուածը հասցրին Չամիլի ապստամին: (Միևնոյն ժամանակ միւս կողմից, Աշխեռոնցիներից զատ արձակուեցան վրաց զրեկուդրներն Իշխան Տարխանովի առաջնորդութեամբ և ապա, Գաղստանցիք իւրեանց հրամանատար Խատեցկու հետ): Գունիբրի նուաճման համար Տէր-Աուկասեանը և Խատեցկին ստացան Ս. Գէօրգի շքանշանի Գ-դ ստտիճանը: Գեներալ-Մայեօր պաանալուց յետոյ

նա բրիգադայի գլուխ եղաւ, մի փոքր ժամանակ էլ դաւառապետ էր միջին Գաղստանում: Իսկ երբ ստացաւ 38-դ գիվիզայի հրամանատարութիւնը, այն միջոցին ծագեցաւ ոուս—թուրքական 1877—1878 թուականների պատերազմը: Պետ նշանակուելով Երևանեան առանձին զնդին, որի գլուխիւնը, ուրիշ զօրքերի բացակայութեան առթիւ շատ ծանր և զրեթէ անյուստալի էր, նա գարմանայի ճարտարութեամբ յաղթեց անակնկալ խոչնդոտներին: Ձէվինի պարտութիւնից զինի նորա յետ նահանջուիլը—մի քանի հազար զաղթականներով, մեծ քանակութեամբ վիրաւորուած հիւանդ զինուորներով հանդերձ, երբ անհնարին էր լրացնել զնդի անհրաժեշտագոյն սիտուզքները առանց թողնելու թըշնամու ձեռքին յաղթական սրելիցէ նշաններ, նորա ազատելը 3000 հայ ընտանիք, Բայազիտի դիւցազնական պաշտպաններին, միւս բանիւ նորա բաւոր գործողութիւնները մինչև Գէվէթօյնուի մտարը, նաև էրպրու-

մի առումը ակներև փաստերով վկայեցին որ Արշակ Յ. Տէր-Ղուկասեանը սաղանդաւոր զօրավար է, որ ամենայն տեսակ պատերազմում և պէս պէս թշնամիների դէմ յաջողութեամբ կարող է մաքառել անկախ և զատ զօրարժնի գլուխ անցած: Ասիական Տաճկաստանում տեղի ունեցած վերջին պատերազմի պատմութիւնը, անտարակոյս, մանրամասնօրէն կպատմէ և կզնահատէ Երևանեան զնդի գործողութիւնը և ըստ արժանայն կլարձատրէ նրա հռչակաւոր հրամանատարի վաստակները:

Բացի սրբիշ պարզկներից, վերոյիշեալ գործերի փոխարէն, հանգուցեալն ստացաւ ս. Գէորգի շքանշանի Գ-դ աստիճանը, և զերմանացուց կայսերից «pour le mérimé» օրգէնը վզի վերայ կրելու: Նա շատ զոհ էր այս երկու պարգևներից, ինչպէս ինքն տեսւմ էր, իւր վերջին անգամ Պետերբուրգ եղած ժամանակ՝ 1879 թուականի գարնանը:

Պատերազմից յետոյ մի քանի ամիս

գրկնատէրների դիվիզիայի առաջնորդութիւնը վարելուց յետոյ, Արշակ Տէր-Ղուկասեանը պաշտօնական հանդամանքների և հիւանդութեան պատճառով, արձակուրդ խնդրեց: 1879 թուականի ամառը անցրեց նա Պետիգորսկում և երբ պատրաստ էր արդէն արտասահման ճանապարհորդելու, յանկարծ հեռագրով հրաման ստացաւ փերագանալ Տփլիս, ուր Գեներալ—Ատիլանտ Յովհաննէս Լազարեանի անակնկալ մահուան առթիւ, Գովկասի փոխարքան հրբաւիրեց նրան զնալ իսկոյն Զիկիշիար, և ընդունել Ախալ—Թէլէօ օվաղիզից յետ դարձած զօրաց հրամանատարութիւնը: Զննելով մեր այն տեղի բռնած ըլլոր կէտերը, քաջ վերահասու լինելով իրերի դրութեան, Տէր Ղուկասեանը մանրամասն հաշուով դարձաւ կրկին Տփլիս, խնդրելով միևնոյն ժամանակ, որ արձակին իրան հիւանդութեան պատճառով, Անդրկապսեան զօրքրի հրամանատարութիւնից: Նա այլևս չփերագարձաւ այնտեղ, և նշանակուեցաւ կով-

կասեան երկրորդ զօրարածնի հրամանատար, հանգուցեալ Գեներալ Լազարեանի տեղը:

Թէ սրբան հասարակ գինւորները սիրում ու հաւատ էին ընծայում Գեներալ Տէր-Ղուկասեանի ընդունակութեանը, և ռազմական ճարտարութեան, երևում է Շ. Петербургскія Вѣдомости լրագրի 1878 թուականի, թղթակցի հետեւալ խօսքերից. «Наши солдатики говорятъ, что мы съ генералами Теръ-Гугасовымъ да съ Денибеговымъ и на черта пойдемъ»:

Անա հրջանկայիշատակ Արշակ Տէր-Ղուկասեանի գործունէութիւնը օտարների կարծիքով: Որպէս հայ, շնք կարող չյիշել հանգուցեալի մի ազգասիրական գործը՝ որ դուցէ շատերին յայտնի չէ: Երբ Բագուայ «Մարդասիրական Ընկերութիւնը» դեռ երջանկայիշատակ բժիշկ Ռոստոմեանցի թրդթերումն էր՝ Արշակ Տէր-Ղուկասեանը իւր առատ նուիրարկութեամբ, մինչև 5000 ռ. առաջինն հղաւ, որ հիմն գրեց

այդ ընկերութեան: Թող հանդուցնալի ուրիշ գործերն և նուիրարիբութիւնները, որոնք շատերին գեւ յայտնի չեն: Նորա կեանքի ապագայ պատմիչը անտարակոյս կժողովի այդ ազգասիրական բարի գործերը և այդպիսով աւելի կփառաւորէ նորա արդէն փառաւոր անունը:

- «Թող պատերազմում, կռուի դաշտում,
- «Մեր հայրենիքի փրկութեան համար
- «Մուրը քո ձեռին փառաւոր մահով,
- «Թող դու զոհէիր քո արիւն արդար»:



ՅՈՎՀԱՆՆԷՍ ԼԱՉԱՐԵԱՆ

Թգոսոսի 14-ին, 1879 թ., Կասպից ծովի արևելեան սահմաններում, Չաթա տեղում, վախճանուեց մեր հայ ազգի և ուսական գորքերի գննեբալ աղիւտանա Յովհաննէս Լազարեան:

Հանգուցեալը ժամանակակից հայերի մէջ առաջինն կարող էր համարուել իւր ջիքով ազգասիրութեամբ, քաջութեամբ և առհասարակ՝ որպէս բարի մարդ, բարի քրիստոնեայ և սիրելի հայր գերգաստանի: Ազգով հայ, ծնուած (1820 թ.) Չուշի քաղաքում, աղքատ ծնողներէ որդի, փոխարինելով գերձակի ասեղը հրացանի, համարեա առանց որևիցէ կանոնաւոր ուսման, Յովհաննէս Լազարեան երկրասարդը՝ միայն իւր հանճարովն՝ որդէս գինուոր՝ երկար տարիներէ ընթացքում՝ փառաւորեց իւր հայ անունը:

Վերջին ուսուցանողական պատերազմում 8. Լազարեանը լինելով հրամանա-

տար սահմանում և պահեստում գտնուած
 գօրքերին ո՛չ պակաս ցոյց տուեց իւր հան-
 ճարը, որպէս զիտուն և քաջ զինուորի:
 Բայց առաւել բարձրացաւ նրա փառքը և
 պատիւը երբ որ նա միջամուլս եղաւ Կար-
 սի շքնակայրում եղած քանի մի պատե-
 րազմեների մէջ և վերջապէս նրա ցոյց տու-
 ած ճանապարհով և նորա աշխատակուց-
 թեամբ կատարուեցաւ այդ անսովի Գարս
 բերդի գրաւումը: Այս յաղթանակի համար
 նա արժանացաւ ստանալ զինուորական
 բարձրագոյն շքանշանի, այն է՝ Ս. Գէորգի
 2-րդ աստիճանի խաչը:

— Տղերք, ես իմ բիւիերս եր կանեմ,
 թա որ Նումեսնիլի (փոխարքայի) ասուա-
 խմբութիւնին պարտադր (ածնական հան-
 գէս) Ղարսում չը կատարենք:

— Ա՛խ, ամի, հինչ լու երնէ՛ր, հանի կա-
 րելի՛ ա:

— Խէ՛ չի կարելի, Խսորով, դօշազ կաց քը
 մտտազ, ինձանից առաջս դու մտնելու Ղարսը:

Նայեմք իր սկզբներում մի գիշեր իւր
 վրանում զենքերս— Լէյաեհանտ Յովհան-
 նես Լազարեանը շքնապատուած հայրենա-
 կիցներով, զարարողի բարբառով այսպէս
 սղևորում խօսում էր իւրայինների հետ:
 Խսարով իւր հանգուցեալ հարապատ եղ-
 րայր Պօղոսի որդին էր, 23 տարեկան
 սպայ: Գաղստանի հերոսը իւր անմիջական
 զեկավարութեան ներքոյ էր վերցրել կորօր
 որդուն և ռազմի ասեզ գաշաւում կրթում
 նրան:

Զինուորական խորհուրդը գէտ էր Յ. Լա-
 զարեանի պլանին, և վճռել էր անսովի,
 անմատչելի Ղարսի նուաճումը յետաձգել
 մինչև զարուն: Յետ նահանջել, հնարաւո-
 րութիւն առ թշնամուն աւելի լաւ ամրա-
 պնդուել, այդ սխալ կարծիք է: Չեր ին-
 չի՛ն է պէտք, ես իմ գլխով պատասխա-
 նատու եմ եթէ Ղարսը մինչև երկու օրը
 մերը չլինի: Գիշերը չվերցնեմ, արշալոյ-
 սին կտանեմ, արշալոյսը Նումեսգարսիւն
 անի, վերջալոյսին կվերցնեմ, մի խօսքով

այսօր թէ էգուց Ղարսը մերն է:

Ֆեներալ Յ. Լազարեանի համուզուած վճիռը անզօր եղաւ տապալել նոյն իսկ ամբողջ բանակի սպարապետ Մ. Լ. Մելիքեանը և Լազարեանն ընտրելով ինքն իր զինակից վաշտերն ու զնղապետներին, աուեց նրանց կտրուկ հրաման: Նոյեմբերի 4-ի գիշերը սաստիկ անձրև էր գալիս, մշուշը պատել էր ամեն կողմը, երկու քայլի վերայ ոչինչ չէր ճոկուած: Բայց հետեւեալ գիշեր պարզ էր և լուսնիակը իւր թախծալից լուսով փայփայում էր Լազարեանին և յոյսի նշոյլներ շողում նրան: Ալխազեանին, Փաղէկին ամենածանր յանձնարարութիւններն էր արուած և նրանք անվեհեր հրամանատար Լազարեանի վրասահութիւնը արդարացրին:

Երեկոյեան ժամը 8-ն էր. Լազարեանը վերջին անգամ անցաւ գօրջի առաջից և նրանց մէջ կանգնելով, վերջից գլխարկը

խաչակնքեց, «Ս. Կարմիր Աւետարանը» օգնութեան կանչեց, սպա դառնալով գօրջին ասաց՝ «Ասուած ձեզ նե՛ս: Գիթական սպողեցութիւն ունեցաւ այդ օրհնութիւնը շնորհակալ զինուորների վրայ և նրանք սկսեցին առաջ ընթանալ: Թշնամու բանակից յանկարծ թնդանօթներից կրակի հեղեղ սկսեցին թափուել. բայց անվեհեր Լազարեանը առաջ էր ընթանում անվախ:

Մ. Լօռու-Մելիքեանը դիտում է հեռուից և ահա նա ուղարկում է թիկնապահին, որ յայտնէ Լազարեանին թէ սպարապետը թայլատըրում է յետ նահանջի:

«Ասացէք պ. Սպարապետին, որ Լազարեանը յետ դարձողը չէ», պատասխան է ուղարկում կամակոր գնեւալը: Տասներկու

) Կարմիր աւետարանը ընդունւած Ղազանչեցոց եկեղեցում մի հին ձեռագիր աւետարան է, հրաշագործ, օգնական հաւատացեալներին:


XII. ՃԸՆԸՊԸՐ ՀՈՐԳԸԿԸՆ

Անդրկովկասեան Երկարագիւններ:

I ԲԵԹՈՒՄԻՅ—ԹԻՖԼԻՍ—ԲԵԳՈՒ

ժամ անդադրում յաղթական կռուից յիտոյ, Ղարսը իւր բոլոր ամբուլթիւններով անցաւ ռուսներին ձեռքը: Բայց հայրենաւէր, և անվախ անձնուէր Լազարեանը, մեր համեմատաբար փոքր զոհերի հետ, զոճ բերաւ հայրենիքին և իւր սրտի հատարք, իր սիրելի եղբոր սրգի Խոսրովին: Նա իր խօսքի տէրն էր, և կամենում էր, որ Խոսրովը իրանից առաջ մտնի Ղարսը: Եւ թէև նա մտաւ Ղարս առաջինը, բայց այնտեղ էլ զնդակահար լինելով թաղուեց հայոց եկեղեցու բակում:

Նոյեմբերի 8-ին Փոխարքայի և ընդհանուր բանակի հրամանատար Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայեւչի ստեղծութեան օրը Ղանլի և Հաֆիս ամբոյնների մէջ տեղը, քաջ արի Լազարեանը, ամբողջ բանակի իւրև հրամանատար, ողջունեց զօրքին, շնորհաւորելով սիրեցեալ Մեծ Իշխանի ստեղծութիւնը և Ղարսի՝ Գահոյքի պատուանդանին ընծայարեւումը:



Կայտարանները	Երկարութիւնը միլիմետրով	Տոմսակների զինքը.		10 ֆ. բազամի կինը
		II կ.	III կ.	
		բ. կ.	բ. կ.	կապ.
ԲԵԹՈՒՄ	—	0 27	0 18	00.75
2 քաջա	20	0 48	0 32	01.37
Կօրուկա	40	0 80	0 28	02.13
Նաթանների	40	1 13	0 75	02.99
Սուփոս	68	1 53	1 02	04. 8
Լանչխութի	75	1 65	1 10	04.43
Նիդօիթի	88	1 95	1 30	05.18
Սաջեմաթօ	97	2 15	1 43	05.69
Սամսուրի	108	2 40	1 60	06.38
Կոպիտ արի	126	2 76	1 84	07.36
Բիօն	132	2 91	1 94	07.76
Աջամեթի	154	3 36	2 24	08.97
Կվիլիլի	—	3 45	2 50	09.20
Չորապան	167	3 57	2 38	09.72
Զերալի	176	3 69	2 46	10.24
Բելուգորի	184	—	—	—
Մարելիսի	194	3 90	2 60	11.10
Մալիտա				

Միխայիլօ	213	4 20	2 80	12.36
Գօմի	223	4 34	2 89	12.94
Կարելի	237	4 53	3 02	13.80
Պօրի	254	4 76	3 17	14.78
Գրակալի	267	4 94	3 29	15.53
Կասպի	279	5 10	3 40	16.22
Բասնկա	294	5 28	3 52	17.02
Մցխեա	304	5 70	3 80	17.25
Աւճալա	315	5 70	3 80	17.25
Թիֆլիս	325	6 00	3 80	18.75
Նալթուզ	—	—	—	—
Աղ Թալա	245	6 00	4 00	18 75
Կարանկա	361	6 50	4 20	20.25
Սոււզ. Բուլ.	382	6 60	4 40	21.75
Պօլլի	499	6 90	4 60	23.25
Աղսրաճա	413	6 90	4 60	23.75
Թօուզ	432	7 20	4 80	24.75
Չիզմի	457	7 50	5 50	26.25
Պօլլար	—	7 50	5 00	26.25
Չամբրո	479	7 80	5 20	27.75
Պանճակ	501	8 10	5 40	29.25
Գալ-Մամիսի	518	8 10	5 40	29.25
Գերան	541	8 40	5 60	30.75
Եվլախ	564	8 70	5 80	32.25
Լարի	588	8 70	5 80	32.25
Տեջարի	607	9 00	6 00	33.75
Մուսուլի	631	9 30	6 40	35.25

Քիւրդամիր	650	9 60	6 40	36.75
Սաղիրի	673	9 60	6 40	36.75
Ղարա-սու	697	9 90	5 60	38.25
Հաջի-Կար.	721	10 20	6 80	39.75
Նաւաղի	738	10 20	6 80	39.75
Ալաթ	762	10 50	7 00	41.25
Սանդաշալ	783	10 80	7 20	42.75
Փուլթա	808	10 80	7 20	42.75
Բալաշարի	826	11 10	7 40	44.25
ԲԱԳՈՒ	839	11 10	7 40	44.25

II ԲԱԳՈՒՅՑ — ԹԻՓԼԻՍ — ԲԱԹՈՒՄ:

ԲԱԳՈՒ	վ.	բ. կ.	բ. կ.	կոպ.
Բալաշարի	13	0 32	0 21	00.84
Փուլթա	32	0 69	0 46	01.81
Սանդաշալ	56	1 23	0 82	03.24
Ալաթ	77	1 70	0 82	04.48
Նաւաղի	108	2 21	1 13	05.89
Հաջի-Կար.	—	2 58	1 47	06.87
Ղարա-սու	142	3 09	1 71	08.22
Սաղիրի	166	3 54	2 06	09.60
Քիւրդամիր	189	3 86	2 57	10.93
Մուսուլի	208	4 11	2 74	12.02
Ուջարի	232	4 46	2 97	13.46
Լաջի	251	4 70	3 13	14.49
Եվլախ	274	5 01	3 34	15.87

Ֆերան	298	5 33	3 55	17.14
Գալ-Մամեա.	321	5 70	3 80	17.25
Գանձակ	338	6 00	4 00	18 75
Ճամբոր	359	6 30	4 20	20.25
Գոլլար	370	6 30	4 20	20.25
Չեղամ	381	6 60	4 40	21.75
Թօուզ	407	6 90	4 60	23.25
Աղսրաճա	426	6 90	4 60	23.25
Պօլլի	439	7 20	4 80	24.75
Ստուգա-Բուլ.	457	7 50	5 00	26.25
Կարաբազ	479	7 80	5 20	27.75
Աղ-Թաղլա	495	7 80	5 20	27.75
Նուխլուզ	507	—	—	—
ԹԻՓԼԻՍ	513	8 10	5 40	29.25
Աւճալի	524	8 10	5 40	29.25
Մյխեա	535	8 40	5 60	30.75
Քսանկա	546	8 40	5 60	30.75
Կասպի	560	8 70	5 80	32.25
Գրակալի	572	8 70	5 80	32.25
Գօրի	585	8 70	5 80	32.25
Կարելի	602	9 00	6 00	33.75
Դամի	617	9 00	6 00	33.75
Միխայլով.	627	9 30	6 20	35.25
Վարվարինօ	636	—	—	—
Մալխատ	646	9 30	6 20	35.25
Մարելիսի	665	—	—	—
Բելօզորի	664	9 60	6 40	36.75

Չիրուլի	673	9 60	6 40	36.75
Չօրապան	—	9 90	6 60	38.25
Կվիլի	686	9 90	6 60	38.25
Աչմանթի	707	9 90	6 60	38.25
Րիօն	714	10 20	6 80	39.75
Կօստանարի	731	10 20	6 80	29.75
Սամսրեղի	743	10 20	6 80	39.75
Սաջեվախօ	751	10 50	7 00	41.25
Նիզօիթի	765	10 50	7 00	41.25
Լանչխութի	771	10 50	7 00	41.25
Սուպսա	790	10 80	7 20	42.75
Նօթաների	804	10 80	7 20	42.75
Կօրուլէթի	819	11 10	7 40	44.25
Յուկվա	—	11 10	7 40	44.25
ՌԹՈՒՄ	840	11 10	7 40	44.25

ՄԻՆԱՅԼՈՎԻՑ — ԲՕՐԺՕՄ

Թիֆլիսի Մի- խայլովի վրա- յով—Բօրժօմ.	Վ.	Ր. Կ.	Ր. Կ.	Կապ.
Միխայլովից Բօրժօմ . . .	—	5 05	2 02	8.11
Բակուրիանից Բօրժօմ . . .	—	0 98	0 39	1.55
Փօթիից Սամ- տրեղի վրա- յով—Րիօն .	—	1 03	0 41	1.67
	—	3 25	1 30	5.18

Փօթիից Սամ- տրեղի . . .	—	2 25	0 90	3.57
Բաժնումից Հօրապան . .	—	5 75	2 30	9.20
Բաժնումից Կօրուլեա . .	—	0 80	0 32	2.13

ԹԻՖԼԻՍԻՑ—ԿԱՐՍ

ԹԻՖԼԻՍ	Վ.	բ. կ.	բ. կ.	կօպ.
Նուսթլուզ	—	—	—	—
Սաղանլուզ	13	0 27	0 18	0.75
Ջանդար	35	0 77	0 51	2.01
Սաղախլօ	62	1 35	0 90	3.75
Ախթալա	86	1 86	1 24	4.95
Սառնակի	104	2 25	1 50	5.95
Կալազերան	119	2 57	1 71	6.84
Հանալի	127	2 75	1 83	7.30
Ղարաֆիլիս	142	3 08	2 05	8.17
Համամլի	161	3 47	2 31	9.26
Ղալթաղչի	179	3 78	2 47	10.29
Ջանդուռ	188	3 84	2 55	10.81
Ալեքսանդրապօլ	207	4 01	2 72	11.90
Կարայեալ	229	4 38	2 92	13.17

Բաշ-Քեաղիբլ.	248	4 66	3 09	14.26
Մազրա	266	4 80	3 25	15.20
ԿԱՐՍ	279	5 00	3 37	16.20

ԿԱՐՍԻՑ—ԹԻՖԼԻՍ

ԿԱՐՍ	Վ.	բ. կ.	բ. կ.	կօպ.
Մազրա	13	0 27	0 18	0.75
Բաշ-Քեաղիբլ.	31	0 68	0 45	1.78
Կարայեալ	50	1 08	0 72	2.88
Ալեքսանդր.	72	1 56	1 04	4.14
Ջանդուռ	91	1 97	1 31	5.28
Ղալթաղչի	100	2 16	1 44	5.75
Համամլի	118	2 55	1 70	6.79
Ղարաֆիլիս	137	2 96	1 97	7.88
Հանալի	152	3 29	2 19	8.74
Կալազերան	160	3 45	2 30	9.20
Սառնակի	175	3 66	2 44	10.06
Ախթալա	193	3 90	2 60	11.10
Սաղախլու	217	4 22	2 81	12.48
Ջանդար	244	4 59	3 06	14.03
Սօղանլուզ	266	4 88	3 25	15.30
Նուսթլուզ	—	—	—	—
ԹԻՖԼԻՍ	279	5 06	3 37	16.04

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻԹՅՈՒՆ—ԵՐԵՒԱՆ
ԵՐԵՒԱՆԻԹՅՈՒՆ—ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ

	վ.	բ. 4.	բ. 4.	կոպ.
ԱԼԷՔՍԱՆԴ- ՐԱՊՕԼ	—	—	—	—
Ազին	24	0 53	0 35	1.38
Անի	43	0 93	0 62	2.47
Ալադեօզ	60	1 29	0 86	3.45
Կարա-բուրն.	77	1 65	1 10	4.43
Երաքս	90	1 95	1 30	5.18
Սարղար-Ար.	100	2 16	1 44	5.75
Էջմիածին	120	2 60	1 73	6.90
Ուլ. Էխանլու	132	2 85	1 90	7.59
ԵՐԵՒԱՆ	45	3 12	2 59	8.34
Օրհամի	—	—	—	—
Ուլուխանլու	14	0 32	0 21	0.81
Էջմիածին	25	0 54	0 36	1.44
Սարղ. -Արադ.	45	0 96	0 64	2.59
Արաքս	56	1 22	0 81	3.22
Կարա-բուրուն	69	1 49	0 99	3.97
Ալադեօզ	86	1 86	1 24	4.95
Անի	103	2 22	1 48	5.92
Ազին	121	2 61	1 74	6.96
ԱԼԷՔՍԱՆԴ- ՐԱՊՕԼ	145	3 12	2 08	8.34

ՊՕՍԱՅԻՆ ԺԱՆԱԿԱՐԻՆԵՐ
ԿՈՎԿԱՍՈՎ

Ախալցխայից—Բորժոմ	50 ¹ / ₂	վ.
Ախալցխայից—Ախալքալակ	66 ¹ / ₂	վ.
Ախալքալակից—Ալեքսանդրապոլ	89 ¹ / ₂	վ.
Արդաճանից—Օլթի	124 ³ / ₄	վ.
Ախալցխայից—Արդաճան	72	վ.
Ախալցխայից—Բաթում	147	վ.
Ալեքսանդրապոլից—Ջարլչոտ	52 ¹ / ₂	վ.
Բաշնորազէնից—Նախիջևան	62 ¹ / ₂	վ.
Բաթումից—Արդաճան	150	վ.
Գանձակից—Հաջիբեանդ	27 ¹ / ₄	վ.
Դիլիջանից—Երևան	62 ¹ / ₄	վ.
Դիլիջանից—Ղարաբաղիսա	19 ¹ / ₂	վ.
Երևանից—Բաշնորազէն	89 ¹ / ₄	վ.
Երևանից—Էջմիածին	181 ³ / ₄	վ.
Թիֆլիսից—Ջալալ-Օղլի	135	վ.
Հաջիկարուլից—Սալեան	50 ¹ / ₂	վ.
Ղարաբաղիսից—Դիլիջան	38	վ.
Ղարաբաղիսից—Ջալալ-Օղլի	50 ¹ / ₂	վ.
Կարսից—Սարիղամիշ	58 ³ / ₄	վ.
Կարսից—Վաղպան	78 ¹ / ₂	վ.
Կարսից—Օլթի	102	վ.
Նախիջևանից—Փրզուրադ	74 ¹ / ₂	վ.
Ջուչուց—Խանկենդ	11	վ.
Սարիղամիշից—Ղարապուրղան	37 ³ / ₄	վ.

ՆԱԻՄԳՆԱՑՈՒԹԻՒՆ

Առ ծով: Տոմսակների արժեքը «Русское
Общество»-ի նաւերի համար:

Բաժնուժից մինչև	Առանց ուսելիքի					Ի արդ.
	Պոստ-մար- դատարճա- ւերի վրայ		Ապրանքա- մարդատար նաւ:		Բաղ.	
	II կ.	III կ.	II կ.	III կ.		
Օգիստա	19 85	9 80	15 90	5 50	60	
Եւպատորիա	14 80	7 20	11 85	4 50	55	
Սևաստոպոլ	14 —	7 20	11 20	3 90	55	
Եալթա	14 —	7 10	11 20	3 60	50	
Ալուշթա	13 75	7 —	11 —	3 40	50	
Սուդակ	13 75	7 —	11 —	3 40	50	
Թէօդոսիա	13 —	6 40	10 40	3 40	50	
Կերչ	11 —	5 20	8 80	3 —	40	
Նովորոս.	8 70	4 —	7 —	2 25	25	
Անապա	11 —	5 20	8 80	3 —	40	
Ջուրդի	8 70	4 —	7 —	2 25	25	
Տուսպուէ	6 —	3 20	4 80	2 —	25	
Սոչի	6 —	3 20	4 80	2 —	25	
Ադլէք	6 —	3 20	4 80	2 —	25	
Գուդաուս	5 60	2 40	4 50	2 —	25	
Նոր Աֆոն	5 10	2 —	4 10	1 30	25	
Սուխում	3 25	1 20	2 60	1 —	20	
Օչեմչիք	2 35	1 20	1 90	1 —	20	
Փօթի	1 50	— 80	1 20	— 50	20	

Առ ծով

«Русское Общество»-ի նաւերը Բա-
թումից հեռանում են՝ կրեքշաքթի և ուր-
բաթ օրերը, կրեկոյեան ժամի 5-ին:

Բաժնուժից մինչև	II կարգ		III կարգ		1 կղ. բաղ.
	Բուրխ	Կոսկի	Բուրխ	Կոսկի	Կոսկի
Փօթի	1	40	—	50	10
Օչեմչիք	2	40	—	75	13
Սուխում	2	60	—	—	14
Նոր Աֆոն	3	40	1	30	15
Գուդաուս	3	60	1	40	13
Սոչի	4	—	1	60	20
Տուսպուէ	4	50	2	—	20
Նովորոս. իսկ.	5	—	2	25	23
Անապա	6	—	2	75	25
Կերչ	6	50	3	—	25
Թէօդոսիա	7	50	3	40	30
Սուդակ	7	50	3	40	30
Եալթա	8	—	3	60	35
Սևաստոպոլ	8	50	3	90	35
Օգիստա	12	—	5	50	45

Կասպից ծով:

«Кавказъ и Меркүрий» ընկերութեան նաւերը պտոյտ են անում Բագուից—Դերբենտ, Պետրովսկ, Ասաբախան: Ընկերութիւնն ընդունում է ապրանքներ մինչև Վոյզա, Կասպից ծովի նաւահանգիստները, Անդրկասպեան երկիրը և Մոսկվա, Վարշավա, Լօձ և Բոստով հասցնելու համար:

Ընկերութեան գրասենեակը Թիֆլիսում, Բարեաթինսկայա փ., № 8, տեղեֆօն 415:

«Н.дежда» ընկերութեան նաւերը որոշ կամ անորոշ ժամանակներում պտոյտ են անում Պետրովսկ—Ուզունադա և Բագու Ուզունադա դժերով:

Ընկերութեան գրասենեակը՝ Թիֆլիսում Դժօրցոլայա փողոց, Վրաց պնւ. տան մէջ:

Դէպի արհասանաւան

Փրանսիական «Messagerie Maritime» ընկերութեան շոգենաւերը կանոնաւոր կերպով երթեկեկում են Լօնդօնի, Մարսելի և Բաթումի միջև: Լօնդօն գնացող նաւերը

մտնում են նաև Կ. Պօլիս, Մարսել և Հալքը: Նոյն ընկերութեան նաւերով կարելի է գնալ և Եսֆֆա, Ալէքսանդրիա, Հնդկաստան, Չինաստան, Ճապոնիա, Մադագասկար, Եուա, Յէյլօն, Ասաբախա, Ջանդիրար, Նոր-Կալիդոնիայ և այլն:

Գործակալութիւնը Թիֆլիսում—Դժօրցոլայա, վրաց պնւ. տան:

Փրանսիական «Н. Пакс и К.» ընկերութեան շոգենաւերը կանոնաւոր երթեկեկում են սուղակի Բաթումից—Մարսել և հակառակը—Մարսելից Բաթում: Նաւերը մեկնում են իւրաքանչիւր երկու շաբաթը մի անգամ. Բաթումից, շորեքշաբթի օրը—ժամը 4-ին ճանապարհին մտնում են Տրապիզօն, Սամսոն և Կ. Պօլիս:

Ամեն տեսակ տեղեկութիւններ ստանալ կարելի է Թիֆլիսում Պ. Օ. Բարեկենդանեանից:

Սիօնի փողոց, Խօջապարուխօվի քարվանսարայ:

Մ Ո Ւ Ն Ն

Մայրենի լեզու

Մայրենի լեզու, մայրենի բարբառ,
Ախորժ ընտանի իմ հողու համար,
Առաջին դու խօսք, տկանջիս հասած,
Գու սիրոյ քաղցրիկ առաջին յօգուած,
Մանկական լեզուիս թոթովանք տկար,
Հնչում ես իմ մէջ դու միշտ անդադար:

Գեղեցիկ լեզու, հրաշալի լեզու,
Այդ ինչպէ՛ս քաղցր հնչում ես ինձ դու,
Գամիմ աւելի քաջ ծանօթանալ
Քո ճող գանձերին, հոգով հայանալ,
Ասես թէ ահա կանչում էին ինձ,

Պտպեր ու հայրեր խոր գերեզմանից:
Հնչի՛ր, դու հնչի՛ր այժմ և յաւիտեան,
Մայրենի լեզու, բարբառ սիրական,
Արի բարձրացիր հնութեան փոշուց,
Գու իմ հոյ լեզու մոռացած վաղուց,
Զգեցիր Լոր կեանք ս. գրուածքներով,
Որ ամենայն սիրտ վառուի քո սիրով:

Ս. Նազարեան:

Հայոց աշխարհիկ

Հայոց աշխարհիկ դարունդ է հոսել,
Ահա գեղեցիկ դարուն քո եկել,
Ով դու ի վաղուց մոռցուած հայրենիք,
Ով դու իմ սրտիս անմոռաց տեղիք,
Ահա զարունիկդ եկել է եկել,
Աւաղ Մասեոց ծայրն ընդ քեզ հաշտ հայել:

Այն սե, սե ամպերն դարձեր ի փախ,
Այն ճերմակ ճերմակ սարերն են անվախ,
Զնիկն ի ծոցին բացեր է ճանապարհ,
Քաղցրիկ քրքրջով զլորեն զկաս հազար,
Այն բարձր ժայռից, որ երկնուց են մօտ,
Գենոց օրհնութեան ծագէ առաւօտ:

Բայց նահապետիս ինչ ասեմ ձերուկ,
Որ իմ քան զամեն ծաղիկ վաղանցուկ,
Իմ գալունս անցել, հասել է աշուն,
Ցամբած աերևուկս ոպասեմ հովուն,
Թէ հրք ի լերանց ծոցուն փշէ հով,
Զգէ անկողի՛ծ զիս ի մահուան ձոր:

Ալ ես նահապետ ցտմբած ծերունիս,
 երթամ մեր հին հարցն տամ աւետիս.
 Ասեմ թէ զարուն երեկ տանն Հայոց,
 Գուր նահապետիս ասացէք հոգոց,
 Ծեր նահապետիդ տուր կակուխ հողիկ,
 Ար դբեզ պինդ սիրեց Հայոց աշխարհիկ:

*
 * *

Թորկեր իմ խեղճ, աղլար զիմ ճմեր, զիմ տուն,
 Կսլարտիմ մէկ փշուր շար խացի խամար,
 Ըսկի շունիմ դադար, բսկի շունիմ քուն,
 Եօթ տարի է յինէ շունին մէկ խապար:

Զբմ գլնա թէ՛ մկայ ինչ ձուն տամ զլիսիս,
 Կուրցեր են իմ աշեր, մացեր իմ լալիս
 Մէկ գուռմ լէ շի բացուի իմ սե իղրալիս,
 Զեմյէ էն Կիկոն իմ, անօթի, անճար:

Խայու խուտա, Խայու Աստուած, փրկէ՛ զիս,
 Գիպա Մշու դաշար զիմ տուն խրկէ՛ զիս,
 Ետ չէ առ զիմ խօզին, ումբրէս գրկէ՛ զիս,
 Գամբախս շիրիշկէ զիմ սէֆիլ նուպար:

Ա. ր ա գ

Արայն եկաւ լափին տալով,
 Փեռ քարերին ափին տալով,
 Ո՛րտեղ թաղեմ ես իմ դարդը
 Չոր զլուխս սափին տալով:
 Ա՛յ իմ Արագ ջուրդ վարար,
 Սիրուն եարիս հարար տես՞ր,
 Ես չը հասայ իմ մուրազին,
 Արնդ, հարար կարօտս առն՞ր:
 Ամպերն ընկան Մասիս սարին,
 Կարօտ մնացի ես իմ եարին,
 Աստօծ սիրեռ, էրուած սրսիս
 Զուղաղ բերես եկող տարին:
 Գիշերն անքուն զիր կզբեմ,
 Արասուքօ դեռ կշինեմ,
 Արագ, ծէզը ջրիդ շառած,
 Իմ սե դարդը քեզ կբերեմ:
 Կասես շողքը քորին ընկաւ
 Կբակն իմ սրտին ընկաւ
 Կամար ունքից, թուխ աշքերից,
 Ցան իմ ջիւան ջանին ընկաւ:

Չուր ե՛րբ մեամ

Չուր ե՛րբ մնամ գէլու գուներ,
Երթամ գունիմ զիմ խեղճ գառներ,
Սուք՛մ զիմ բաղչայի ծառաներ,
Զարթիր լսօ, մոնիմ քզի:

Գրող տանի քուրդ Հասոյին,
Սպանել է ջոջ Ափոյին,
Իլլաջ մացեր Արարոյին,
Զարթիր լսօ, օգնէ Խային:

Խեղճ մշեցին մնաց լալով,
Հեռու երկրներ ման գալով,
Մեռաւ թուրքի պարտքը տալով,
Զարթիր լսօ, մրանիմ քզի:

Սեֆիլ, շիւան, մացած հոյեր,
Եղած անտէր բնու հուրքեր
Տէր, դու փրկէ, սահէ արթուն
Զարթիր լսօ, օգնէ իտյուն:

Խղճուկի ձէն

Ընցաւ տարին հայոցս էլ փառքն ընցաւ հետ,
Գրախտի սարէն գարունն յետին բարննետ,
Գտրիճք առան գէնքերն, իջան տակ հողին,
Վախ մեր գլխուն, սև մուր եկաւ էն օրին,
Հայու աչքեր թող մեզի լան,
Ա՛խ մեզ լան, վա՛խ մեզ լան:

Հայեր, գնրի եղանք բաղդին անողորք,
Առաուտժ, հրեշտակ, մարդ չլսեց մեր բողոք,
Մեր լարերու ձէն ծածկուաւ ծարնոյ տակ,
Մշու դաշտեր պահեն սրտիս հառաշանք:
Հայու աշուղք թող մեզի լան,
Ա՛խ մեզ լան, վա՛խ մեզ լան:

Մաաղաշ ազջիկն ու հարս հալաւ մի շունի,
Որ իր մարմին անօրէնի դէմ ծածկի,
Էնպէս գրած ձեռքերն աշից ամշկոտ,
Գութի սիրոյ ողորմութեան է կարօտ:
Հայ աղջիկներ թող մեզի լան,
Հայու հարսներ թող մեզ լան:

Կեցէք, Մշու դաշտի քամիք դուք կեցէք,
 Մեր որբերու բարին էլ ձեր հետ տարէք,
 Ու երբ ընցնիք սուրբ օրէնքի կամարից,
 Հոնկուց ըսէք խարիպ մեր հայ անդրերից:

Էլ ի՛նչ պէտք է, որ մեզի լան,
 Ա՛խ մեզ լան, վա՛խ մեզ լան:

Մացէք բարով, իմ հէր ու մէր, քուր, ախպէր,
 Մացէք բարով ծանօթ սարեր ու դաշտեր,
 Գուցէ մեռնիմ էլ շտեմնիմ այսուհետ,
 Գորդ մի էնէք, դուշման տարեր եմ իմ հետ:

Ա. գ ու ե ռ զ ր

Ես ի՛նչ կենեմ կով ու կթան,
 Որ մենք շունիներ չու՞թ ու գու՞թան:

Ազի, ազի, ազի, ազի,

Ազու գորդերն է սարով

Անուշ, անուշ, անուշ, անուշ:

Ջահէլ եմ, ջիւան եմ, չեմ երթայ

Ազի ջան: (Կրկնել աների վերջը.)

Անարատ կաթ Աստուածածին.
 Գու սնդ պահէ նանու բալին:

Արևն ելաւ կամար կամար,
 Էս լարն էլաւ մեզի համար:

Էլ մենք շունիներ մխիթարանք,
 Երկնուց դետին ընկանք, կորանք:

Սասնայ սարեր փուս էք,
 Խեղճ մշեցուն աչքի լուս էք:

Խաշը տորան քցին ջուրը
 Նոր եկաւ մեզի էս լուրը:

Ղշերն էկան ծառին թառան
 Անուշ բալիս ձեռնէս տառն:

Էլ Ֆիղանս, մեր աուն շկայ
 Կիշերն աչքերս էլ քուն չի գայ:



Լուսնակ դու անցիր զնա՛

Լուսնակ, դու անցիր զնա՛,
 Հօյ, նազանմ նազանմ,
 Կանգ առ դու անցիր զնա՛,
 Գիւլ նազանմ, նազանմ.
 Եւր ջան դուն բարով արի
 Կանանչ սարերով արի
 Կարմիր սօլերով արի:

Երբ որ տեսնես իմ եարին
 Բարև տուր անցիր, զնայ:

Երկեն գամը սալած է,
 Ալ ձին մէջը նալած է,
 Ալ ձին նալը ի՛նչ կանէ,
 Սիրունը խալն ի՛նչ կանէ:

Վարդի ծառին փուշ կըլի
 Նուշի ծառին նուշ կըլի-
 Էրնէկ էն աղջկանը,
 Սիրած եարին դուշ կըլի:

Գարգո լացէ՛ք, սարի սմբուլ,
 Ալան-ալան ծագիկներ.
 Գարգո լացէ՛ք բողի, բրուլ,
 Ամշող երկնուց զով հովեր . . .

Երկինք-գետինք զլիուս մթնան,
 Անտուն անտէր կուլամ ես.
 Եարիս տարան, ջանիս տարան.
 Հոնգուր, հոնգուր կուլամ ես. . .

Ե՛խ, եարս ինձի հանեց սրտէն,
 Անճար թողեց ու զնայ . . .
 Սրտիս սուղէն-խորունկ ետրէն
 Անդեղ թողեց ու զնայ . . .

Ա. Իսահակեան

Ապու արանցը

Քանի մէկ բարբաբիմ, քանի մէկ գառուխ,
Մայրիկ: Ի՞նչ է պարտիս միսի՞նքանքը:

Հէ՛, ինչպո՞ւմ հէ՛, ջանան՞մ հէ՛,

Ո՞ւրեք՞մ հէ՛, սիրելիս:

Տայ Աստուած, որ ես էլ մեռնիմ սպառուիմ,
Այո՞ւհեան ի՞նչո՞ւ է պետք իմ կեանքը:

Չէ՛, չէ՛, ազրէ՛ք, չէ՛, չէ՛,

Ձան՞մ չէ՛, չէ՛, հոգիս, չէ՛ սիրելիս:

Երանի էր ինձ չը ծնէիր մայրիկ,
Զունհնայիք ինձ պէս տարտարող աղջիկ,
Գուք էլ ինձ հեա եղաք խեղճ ապերձանիկ,
Մաշեց քանդեց մեղի դառն փորձա՞նքը:

Ասին եմ շփոխուա իմ օրս լաւի,
Կարճունջ դառայ ես հոգեքի աւ ցաւի:

Եթէ Աստուած չկամենայ ինձ հ,

Չե՛ կատարու:

«Ազգային գրադարան»



NL0144896

13430